



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ՊԵՏՐՍԱՊՈԼԻՏԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՊԱԿԱՆՔ

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԻ

ՔԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՏՐԱԿ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Տ. ԳԵՈՐԳԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՂԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԵՆԻ ՅՈՎԱԿԻՄՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

— 1859 —

4572

45754



Առ Աղնիւ Գ.***

7 Նոյեմբեր, 1859.

Ազգին մէջ ընթերցման սէր ձգելու համար քանի մը բարեմիտ անձինք միջոց մը մտածեր են, որ ընկերութիւն մը կազմելով*) աժանագին գիրքեր տպագրել տան, ու կարդալ ու զտղնէրու նարտու նջնու պատճառ անքնէրը կերպով մը վերցընելու կարող ըլլան, և բաւական գումարիկ մը ձեռք բերելով, կամք ըրեր են սկզբնաւորութիւն մ'ընելու: Արդիտաւորութիւննին մեզի յայտնելով, խնդրեցին որ Պլուտարքոսի Բարոյականաց թարգմանութիւններէն երկու տետր իրենց ընծայէնք: Մենք ալ առաջին տետրակին մէջ հետզհետէ տպագրել տալու խոտումսն ընկա զժբաղդաբար շկրցած ըլլալով կատարել, հարկադրեցանք զիջանելու, ու իրենց աս բարենպաստակ հաստատութիւնը սիրող ըլլալնիս յայտնելու համար նախընտրեցինք աս տետրակը առանց ինչ և իցէ ակնկալութեան, Ընկերութեան ալ սիրով ընդունեցաւ: Ար մնայ հիսնայ աղաչել ձեզի, Աղնիւ

*) Ընկերութեան կանանները տետրակիս վերջը տէս:

Բարեկամ, որ եթէ ձեռքերնիդ անցնի ու կար-
դար, թարգմանու թեանա ունեցած պակա-
տու թիւններուն ներազամիտ ըլլար: Քանզի
հիմա քննադատու թեան անաչառ ատենակալ-
ներու բազմու թիւն մը երեւան ելած է Աղ-
գիտ մէջ, ու իրենց բանադատու թեան երկ-
նատուր ձիւքերովը ուղան ու մժղուկը, շիւղն
ու գերանը խտտորնակի կը դատեն: Թէպէտ
դուք, քսե լիցի, առ կերպով ինքըզինքնիդ
բարձրացնելով նուստտանալու տեղի շէք
տար, սակայն այնպիսեաց յարմար պատաս-
խան մը ապառ կանխազգեցու թիւն ունենալ-
նուդ համար յիշեցինք որ ըսէք. «Ահի քանիիդ
ըրածը կայ ու կ'երեւայ, մէկ քանիիդ ըրածը
չկայ որ երեւայ»: Ապաշեմ ալ, որ խօսքիտ եղ-
րակացու թիւնը բանիւ չըսէք, իրենք տեւրա-
կիտ մէջը երեւելի անձանց օրինակէն մակաբե-
րելով, երանի՛ թէ խրատուին:

Աղիւս ու թեանդ

Միշտ երախտազէտ

Կ. ՉՈՒՆՅԵՆ

Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պլուտարքոս այս ճառը կը գրէ աղի մը
 որ ալ այրութեան հանդերձը հազած էր :
 Իրեն կը հասկըցընէ թէ այն ազատ վիճակը
 սրուն մէջ որ մտաւ , զինքը ամենեւին կա-
 տարեալ անկախութեան մէջ շղենէր , թէ
 երբոր բանաւարութիւնը իրեն առաջնորդ-
 շունէնայ , կիրքերը իր վրան կը տիրապեանն ,
 և թէ մարդս որչափ որ իր պարտքերը ճիշդ
 կը կատարէ , այնչափ ազատ կ'ըլլայ : Պէտք է
 ուրեմն անուանի վարպետներու ձեռայ աակ
 կրթութիւն : Բայց անանց դասերէն օգուտ բա-
 ղելու համար հարկաւոր է աղէկ ունկըն-
 դրութիւն ընել , ու այս գործն ալ կանան-
 ներ ունի աղէկ խօսելու արուեստին պէս :
 Պէտք է ատենաբանողին ծանր ուշադրու-
 թիւն ընել . խօսած ատենը անոր խօսքը
 չընդմիջել , ինչուան որ դձեռն ինքիրեն խըն-
 դիրներ առաջարկելու բողձանք մը ցուցը-
 նէ . ան ատեն ալ միայն խօսած նիւթին հա-
 մաձայն առաջարկութիւններ ընել . բոլոր
 նախանձու դպացումներէն ինքզինքին դգու-
 շանալ . տեսնուած սրահասութիւններուն նե-
 լողամիտ ըլլալ , շխարհիլ արտաքին ու ա-
 լելարդ խօսքի դարդերով , ու աղէկ յարիլ

մանուշանք անոր խօսքերուն մէջը օգտակար
 եղածին . իր վարպետներուն յանդիմանու-
 թեանը դիւրանաաց ըլլալ . բայց աւանց վի-
 ղաւորուելու մեղ խնտարհեցրնող այն ճշմար-
 տութեան վրայ որ մենք կը լսենք . համբե-
 րել քողցրութեամբ այն դուարձաքանու-
 թիւններուն , երբոր անոնք մեր ուղղուիլը
 նպատակ ունենան , ասանկ են այն կանոններ-
 ըր որ Պլուտարքոս պատանեկաց կուտայ ճշ-
 մարտութեան ծանօթութիւնը ու իմաստու-
 թեանն եւ աւարտութեան ալ աւելի շքեաց
 ճաշակը ձեռք բերելու համար :



ՊԼՈՒՏԱՐԳՈՍ

ՅՈՅՆ ՓԻԼՍՈՓԱՅԻՆ ԽՐԱՏԸ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐ Ե ՌԻՆԿՆԴԻՐ ԸԼԸԱԼ

Իմ Սիրելի Նիկանդրոս :

Այլ խրիկեմ քեզի այս ճառը որ ունկնդիր ըլլալու եղանակին վրայով շիներ եմ : Դուն աս միջոցին՝ որ վարպետէդ զատուելով այլաութեան հանդերձը հազար , պէտք է քեզի տրուած խրատները հլութեամբ ընդունիս : Այս անկախութիւնը՝ որ երիտասարդներէն շատը մէկ դէշ կըթուութեան մը ներդարծութեամբ աղատութիւն կը սեպեն , իրենց վերայ տղայութեան ատեննին ունեցած վարպետներէն շատ աւելի խիստ վարպետներ կը դնէ : Աիրքերը կը կատարեն այն շղթայները որ զիրենք գերի կը բռնէին և կ'ըլլան իրենց բռնաւոր : Կանայք , կ'ըսէ շերտոտոս , իրենց հանդերձները հանելով՝ ամօթխածութիւնն ալ կը կորանցրնեն : Կոյնպէս շատ երիտասարդներ ալ երբոր իրենց տղայութեան հանդերձը կը հանեն , ամօթխածութենէ և երկիւղէ կը հրաժարին կ'ելլեն և այն խմբա-

առնն պարկեշտու թիւնը որ իրենց զարդե
 էր, ցախու թեամբ անդը կը լեցընենն : Կսկ
 գունն որ շատ անգամ լած էս թէ բանա-
 կանու թեան հեռու էլը նոյն ինքն Նստու ծոյ
 հնազանդել է, հաւատաւ որ խեղացի երի-
 տասարդներու համար աղայու թենէ այբու-
 թեան հասակը անցնելը, շէ թէ կատարեալ
 անկախու թիւն մ'է, հասցա վարպետը փոխելը
 Մինչեւ ան առնն ո'նեցած վարձկան դաս-
 տիարակներուն անդը, բանահանու թիւնը,
 այն ատուածային վարպետը կ'ըլլայ իրենց
 առաջնորդ և ուղեցոյց : Անկէ կախումն ու-
 նենալուն մէջը կը կայանայ ազատու թիւնը :
 Անիկայ միայն կ'ընէ ինչ որ կ'ուղէ, և ու-
 բիշ բան չընէր, եթէ ոչ ինչ որ կը պարտա-
 լարի ընել (2) : Բայց անկարգ ցանկու թիւն-
 ները, բանահանու թեան հակառակ գործ-
 քերը ու բիշ բան չեն թողուր մարդուս'ե թէ
 ոչ տկար և վայրկեանական մէկ ազատու թիւն
 մը, սրուն ետեւէն իսկոյն երկար առաջաւ-
 մը կուգայ : Այն օտարականները՝ սրանց
 հասարակապետու թեան մը մէջ քաղաքա-
 ցիու թեան իրաւունք կը տրուի, հասարա-
 կաբար շատը այն քաղաքին մէջը գործած-
 աւած ստիպու թիւնները կը պահարակենն (2),
 բայց անոնք որ առջի հասակներունն ի վեր
 անանց ընտանեցած են, և որպէս թէ իրենց
 օրէնքներովն մեծցած են, իրենց բաղդէն
 գոհ ըլլալով, սրտի հաճու թեամբ այն օրէնք-
 ները կը պահենն : Ուրեմն տէտք է, աղայ ի-

րեւոյ հասակին յատուկ ծանօթութիւններու
հետ մէկ տեղ, իմաստասիրութեան առաջին
տխարժակ մը ծծել տալ, որ մէկ երկար առ-
վարութեամբ մը բարբաղին ընտելացեալ մըս-
նեն այս դիտութեանը մէջ: Ասիկա միայն
երիտասարդութեան կատարեալ հասակին զար-
դարանքները, այսինքն բանականութեան զար-
դերը կրնայ տալ:

Ուստի կը կարծեմ թէ դուն զուար-
ճութեամբ պիտի ընդունիս այն դասերը՝ ու-
րանց նպատակն է խելացութեան մասին վար-
ժել մեր բնական զգայութեանց վախճանը,
որ թէսիրաստէսին ըսածին պէս կիրքերու
շատ առիթ կուտայ: Աչքը, ձեռքը և բե-
րանը որ տեսնելու, շոշափելու և ճաշակե-
լու դարձարաններն են, ականջներու զարկող
ձայներու՝ ու շշնկոյցներու՝ պատճառած վեր-
դախումներէն ու սակումներէն աւելի շէն
աղբեր սրտի մէջ, որովհետեւ այս դար-
ձարանը այսինքն ականջը, ալ աւելի կատա-
րեալ է բանականութեան համար քան թէ
կիրքերու: Մտութիւնը՝ մեր զգայարաննե-
րէն շատը բայ կը գտնէ աննոցմէ սարքե-
լով մինչեւ սիրտը մտնելու համար, բայց
առաքինութիւնը ականջաց դարձարանէն զատ
ուրիշ դուռ շունի, երիտասարդներու սր-
տին մէջը սահելով մտնելու: Ուրեմն ինչ-
ուշադրութեամբ պէտք է ասիկայ մտքուր
պահել, սղայութեանէ շոգորթութեան առ-
պականիչ շշնկոյցները և դէշ խօսքերու սառ-

քամիտիսաւ թիւնը անկէ հեռացընելու համար :
 Քսենոկրատ կը կամենայ որ երխտասարդնե-
 րուն ականջները ըմբիշներուն ականջներէն
 աւելի հոգածութեամբ գոցուին : Ըմբիշնե-
 րը , կ'ըսէ , միայն ճզմուելու վախ աւնին (3) :
 Իսկ երխտասարդները շար խրատներու մէջ
 իրենց բարուց խանդարումը կը գանեն : Ա-
 սանկ ըսելով շարտուիրեր երխտասարդաց որ
 բոլոր խօսքերու ականջ գոցեն , վասն զի ա-
 սանկ ընելը կատարեալ խլութենէ մը քիչ
 տարբեր կ'ըլլար , հասցա անոնց խրատ կու-
 տայ բոլոր վտանգաւոր խօսքերը ականջէ
 հեռացնել , մինչեւ որ խմատասիրութիւնը
 հսն հաստատէ իր խմատուն սկզբունքները ,
 որոնք որ իրեն հսն երթալուն շատ դիւրին ե-
 ղող տեղ մը պահպանելու յատկացեալ բաւա-
 կան հաւատարիմ պահպաններու պէս ըլլան :
 Ամասիա ըսել տուաւ Քիասին աւնել մէկ
 զոհի մը միտէն այն կտորը որ ինքը շատ ա-
 զէկ եւ շատ գէշ կը համարէր : Ամատասէրը
 անոր լեզուն հանեց առաւ , որն որ միա-
 պէս մատակարար եւ օգտակար գործիք մը կը
 սեպէր : Շատ մարդիկ երբոր տղաք կը գըր-
 կեն , անոնց ականջը կը բռնեն , ու անոնց
 խրատ կուտան որ իրենք ալ այնպէս ընեն
 թէ որ սերիշները գրկեն : Աս կատակով ա-
 նոնց միտքը կը ձգեն թէ կը պարտաւորին
 յատկապէս սիրել այն մարդիկը որ իրենց
 օգտակար խրատներ կուտան :

Այն երխտասարդը որ կըթաւթեան յա-

տուկ եղած խօսքերը մտիկ շքներ ամենեւ
 շին, շէ թէ միայն առաքինութեան պատու
 մը շտար, հասրա անշուշտ ինքքայինքը բոլոր
 մտութիւններու կը նուիրէ: Ար տեսնէ որ
 իր սրտէն երամտիին դուրս կ'ելլեն վայրենա
 գոյն տունկեր, սրտէս թէ շիշակուած եր
 կիրէ մը: Արդարեւ այն հակամիտութիւնը
 որ մենք գէտ ՚ի հեշտ ցանկութիւնը ու
 նինք, և այն աշխատութեան շախտութիւն
 մեր սրտին մէջ խօսքերով ցանուած օտար
 սերմեր շէն, հասրա բնական տունկեր որ մեր
 սրտին մէջ կիրքերու և հիւանդութիւննե
 րու անբաւ աղբիւր են: Մարդս խելացի
 մշակութիւնով մը ասանք սանձելուն և խա
 պան երկիր մը դարմանելուն տեղը, ասանք
 աղատութեամբ տարածուելու թէ որ թող
 տուաւ, ան ասուն կրնամ բսել թէ շից վայրե
 նի գաղան մը որ ասանկ անձին անհոգ մար
 գէ մը աւելի բնասնի շղաց: Արեւին սրով
 հետեւ լսելաց դործարանը երիտասարդնե
 րու կրնայ պատճառ ըլլալ թէ շատ աղէ
 կութիւններու և թէ շատ գէշութիւննե
 րու, բնականապէս հարկաւոր է իրենց շատ
 անգամ ինքիրեննին մտածել և խորհուրդ
 հարցրնել այն ուրիշներուն՝ սրտեց որ կը
 պարտաւորին մտիկ ընել: Արդեօք որչափ
 մարդիկ անիրաւութիւն կ'ընեն իրենց ան
 ձին, ինչու որ արդեամբք ունկնդիր ըլլալ
 սովորէն առաջ խօսել գիտնալ կ'ուզեն: Ար
 հաւատան թէ խօսելու վարժութիւնը ուա

մաւնք և կրթութիւն կը պահանջէ, բայց
կը կարծեն թէ մտիկ ընելու վարժութեանը
ուսմանք և կրթութիւն պէտքը չէ: Անոնք
որ ազէկ գնասակի խաղ խաղալ կ'ուզեն, այլ
գեօք պէտք եղածին պէս բռնել ու նեւել
չեն սովոր: Նոյնպէս երբ որ մեզի սովորե-
ցնող մէկու մը մտիկ կ'ընենք, առաջին
պարտքերնիս է ազէկ մտիկ ընել ինչ որ կ'ը-
սէ անիկա, երկրորդը՝ ըսածին պատասխան
տալ յարմար կերպով, սրովհետեւ մտաց ըմ-
բռնումը և յղանալը մտաց ծնունդէն ա-
ռաջ է: Թռչնոց վճիտ հաւկիթները՝ որ գե-
ղացիք համէ առաջ եկած կը կարծեն, ա-
նանկ անկատար սերմերէ են, որ չեն կրնար
կենդանութիւն առնել: Ասանկ ալ այն երի-
տասարդները որ ա՛նկնորութիւն ընել սով-
րելու պակասութենէն՝ ըսած օգտակար խը-
րատներուն չեն շահուիր, իրենց խօսքերուն
մէջէն մի միայն հով առաջ կը բերեն: Այն
խօսքերը, կ'ըսէ բանաստեղծին մէկը, «Մե-
տի ճառեր են որ օգոյն մէջը կը ցնդին»:

Չկայ մարդ՝ որ մէկ ամանէ մը ուրիշ ա-
ման հոտաւէտ հեղուկ մը լեցընելու համար
երկուքը մէկ անդ շճուէ, և ամաններուն
բերանը իրարու յարմար շքերէ, որ շթափի:
Բայց քիչ մարդիկ գիտեն այսպէս ինքրզինք-
նին յարմարել այն գիտուն մարդուն որ ի-
րենց հետ կը խօսի, և անոր ըստ բաւական
նին ուշադրութիւն ընծայել, որ ըսած օգ-
տակար բաներէն բան մը շթողուն որ փախ-

շի : Եւ որ կրկին ծաղրական է , թէ որ ա-
 նանկ մէկու մը պատահին որ իրենց հացիկ-
 լայթ մը կամ թատրոնական խաղի մը պատ-
 մութիւնը ընէ , երայ մը կամ ըրած մէկ
 կռիւք պատմէ , լու.թեամբ և երկայնամիտ
 ուշադրութեամբ մտիկ կ'ընեն : Ասոր հակա-
 ռակ՝ թէ որ խելացի մարդ մը իրենք ա-
 նանձին տեղ մը առնէ տանի կրթելու ,
 յանդիմանելու կամ խաղաղեցրնելու համար
 անանկ բարկութենէ մը սրուն անձնատուք
 եղեր են , անոր մտիկ ընելու զգուշութիւն
 չեն ընէր , թէ և անոր իրենցմէ գերազանց
 ըլլալն ալ գիտնան , տաքութեամբ անոր
 դէմ կը խօսին , մանաւանդ թէ կը ձգեն
 ուրիշ տեղեր կը փախչին փուճ խօսքեր մը-
 տիկ ընելու համար : Իրենց ականջները այն
 տպականեալ ամաններուն պէս՝ որոնց մէջ
 միայն անտխտան բաներ կը լեցրնենք , իրենց
 գիտնալու հարկաւոր եղած բաներէն զսա-
 ուրիշ ամեն բանով կը լենայ : Արարեա ձիա-
 դարման մը իր ձիուն բերանը վարժեցը-
 նելու կ'աշխատի որ սանձի հնազանդի . նայն
 պէս վարպետ կառավարիչ մ'ալ իր աշա-
 կերտը բանականութեան հլու կ'ընէ . և
 շատ մտիկ ընելու ու քիչ խօսելու կը վար-
 ժեցրնէ : Սպինդարիտ այս գեղեցիկ գովու-
 թիւնը կուտայ Եզամիտնտասին՝ թէ շէր
 տեսած մէկը որ անոր պէս շատ գիտնայ ու
 քիչ խօսի : Բնութիւնը մեզի երկու ականջ-
 և մէկ բերան տալով՝ արդեօք շուղեր ըտել

Թէ պէտք է շատ մտիկ ընել ու քիչ խօսել :
 Ապա ուրեմն ամեն առթի մէջ լու-
 թիւնը պատանայ մը ամենէն գեղեցիկ դարդն
 է : Անխայելուք է իրեն՝ խօսողի մը խօսքը
 ընդհատել կամ այսպէս քսենք, անոր բա-
 ռերուն ամեն մէկէն ետեւ պօռալ : Թէ որ
 իր կարծիքին համեմատ չէ, պէտք է որ համ-
 քերութեամբ անոր խօսքերուն վերջին սար-
 սէ, և ան ատենն ալ անոր հակառակ քսե-
 լու շարտորայ, հասցա Կոթինէսին խրատին
 հանձայն՝ պէտք է անոր ժամանակ թողու-
 ետեւէն բան մը եւեւընել ըսած ան խօսքին
 Թէ որ կ'ուզէ, կամ ան տեղը փոխել կամ
 կտրել իր հաճոյիցը համեմատ : Մէկու մը
 խօսքը ընդմիջելը, խօսողի մը հետ մի և նոյն
 ժամանակ խօսելը, և ասանկով ոչ խօսողին
 մտիկ ընել, ու ինքն ալ մտիկ ըլլուիլ չը-
 կրնալը, ամեն վայելչութենէ պակաս գրա-
 նուիլ է : Թէ որ մէկը շատ ու շաղբութեամբ
 և համեմատութեամբ մտիկ ընելու սովորու-
 թիւն ըրած է, ինչ որ երկար խօսք մ'ալ ըլլայ,
 անոր մէջէն աղէկն ու օգտակարը՝ ալ աղէկ
 միտքը կը պահէ ու կ'ըմբռնէ, աւելի սպասով
 կերպով կ'որոշէ անօգուտն ու սխալը, և
 ըտրո ժամտութենէ, բուռն կիրքէ և վէճէ
 հեռացած, ճշմարտասէր բնաւորութեան
 մը փորձառու կ'ըլլայ : Աւրեմն պատա-
 նեկաց մտքին մէջը օգտակար օրինակներ
 մեղմով մտցնելու համար՝ պէտք է անոնց
 միտքը սնաստարծութենէ և ինքնահաւանու-

Թե՛նէ պարսպել, ինչպէ՛ս որ տիկերուն օգը
 կը պարսպեն ճնշելով, երբոր հոն հեղուկ մը
 լեցրնել ուղե՛ն : Առանց ասանկ ընելու՝ ու-
 ուեցքով և հախով լեցուն ըլլալուն, դուրս
 կը նեւե՛ն ամեն բան որ հոն լեցրնել ուղուի :
 Նախանձը միշտ գաղանի շար ցանկու-
 Թեան մը հետ ընկերացած ըլլալով, ամենե-
 շին օգտակար չկրնար ըլլալ բանով մը, նաև
 բոլոր աղէկութիւններու ալ արգելք է :
 Բայց ամենէն եւել ունկնդիրի մը խիստ վե-
 տանգաւոր խորհրդական ու խրատատու է :
 Բան մը այնչափ աւելի շտրտեցրնելը մէկ
 նախանձող մը, որչափ որ լաւ խօսել լսելը
 և այս հանգամանքը իրեն անհաճոյ կամ ա-
 տելի կ'ընէ այն ճառերը, որոնք կրնային ի-
 րեն յանչափս օգտակար ըլլալ : Այն տրտու-
 մութիւնը որ ուրիշներուն հարստութիւնը,
 փառքը ու գեղեցկութիւնը մեր վրայ կը
 պատճառեն, յատկապէ՛ս նախանձու կիրքը
 կ'ընէ : կը Թախծի այն բարիքներուն հա-
 մար, որ ուրիշ մը կը ստանայ : Բայց աղէկ
 խօսել լսելու չհաճելը, իր յատուկ օգտին
 վրայ տրամիլ է, վասն զի ճառը՝ անկէց օ-
 գուտ քաղել գիացողին համար անանկ է,
 ինչ որ ըստը աչքին է : Նախանձուն ուրիշ
 տեսակները հոգւոյն այն անկարգ ախորժակ-
 ներէն առաջ եկած են, որ իրենց համեմա-
 տական են : Այն նախանձը, որ մէկը աղէկ
 խօսող մարդու մը համար կու՛նենայ, փառ-
 քի սնտափ փափաք մը, գերազանցութեան

անիրաւ սէր մը իրեն սկզբունք աւնի . և ա-
 սանկ է նախանձու ներգործութիւնները նա-
 խանձողին վրայ . որ մէկու մը ըսածին ամե-
 նաթիւթեւ աշտարութիւն ընծայել չգիտեր :
 Ներքին խառնութիւնը որ զինքը կը տըտ-
 մեցրնէ . ամեն վայրկեան իւր միտքը կը դըռ-
 գեցրնէ . կը քննէ իր յատուկ յաջողակու-
 թիւնը . ասիկա ալ խօսողին մտաց տաղան-
 դին հետ կը բազդասէ . տեսնելու համար
 թէ արդեօք իրմէն գերազանց է . նստող-
 ները կը գիտէ . անոնց յօժարութիւնը կը
 զննէ . անոնց դարմանալը և գովելը թէ որ
 տեսան . այն գովութիւնները որ զինքը կը
 խանարհեցրնեն . մտքին մէջը անոնց դէմ մէկ
 գաղանի սրամտութիւն մը աւնենալ կուտան
 իրեն . կը մտնայ լուելու շափ դուրցուած
 ամեն բան . վասն զի անոնց յիշատակը զին-
 քը կը տրամեցրնէ . կը գողայ որ չըլլայ թէ
 ետքէն ըսուելիքը ալ աւելի աղէկ ըլլայ . երբ
 որ խօսքը ամենէն աւելի շահաւետ ըլլայ .
 ինքն ալ ան ասուն՝ ալ աւելի ստիպուած կ'ըլ-
 լայ խօսքին ընդնալը տեսնելու . խօսքը
 լրանալէն ետեւ . առանց վայրկեան մը
 ըսածին վրայ մտածելու կըզբաղի միայն գիտ-
 նալ . թէ մտիկ ընողները ինչ եղանակաւ
 սրատրտաւած են իրենց հաճութիւնը ստ-
 լու : Եւ մէկ անգամ տեսաւ որ խօսողը կը
 գովեն . անոնցմէ կը վախշի . անոնց քովէն
 կը հեռանայ բուռն կիրքով մը . ան խօսքերը
 թէ որ սրտաբակալ կամ խտուրտակի հասկը-

ցող եղանակով, անանկներուն կը վաղէ ստիպաւ, անանկներուն հետ ընկերութիւն կ'ընէ, թէ որ ըստած խօսքերուն մէջը պատարակելի բան մը չդասնէ, կը բաղդատէ ատենաբանը անկէ աւելի երիտասարդներուն հետ, որոնք որ նոյն նիւթին վրայով վարժութիւն ըրած են և ըստ իւր կարծեացը այն խօսքերը շատ դերասանաց եղանակաւ ձառեր են: Նախանձը այսպէս կը խանդարէ ամենէն գեղեցիկ ձառերը և զանոնք իրեն կատարելապէս անօգուտ կ'ընէ:

Ուրեմն պէտք է որ փառաց սէրը ժամա, նակ տայ փառաբով մտիկ ընելու, ասով ասե- նաբանին մտիկ կ'ընենք այնչափ քաղցրութեամբ և հանգադառութեամբ, որչափ որ և թէ նուիրական խնջոյքի մը կամ կրօնական արարողութեան մը ներկայ գտնուէինք: Երբ որ յաջողութեամբ կատարած ըլլայ, անոր մտաց տաղանդը պիտի գովենք, անկէջ գոհ պիտի ըլլանք գիացածը մեզի հազօրդելուն և մեզի ճաշակ մը տալուն համար այն բանավարութեանը, որ ինքը անձամբ հաւտացած ըլլալուն գործածեց: Բայց սակայն չ'երեւակայենք ալ թէ այն ըսած գեղեցիկ բաները ինքիրմեն հնարած է, կամ որպէս թէ ըստ գիտաց ըսած է, ինքը անոնք իրեն աշխատութեանը իրեն մտադրութեանը կը պարտաւորի, և ան խօսքերուն մեր վրայ պատճառած սքանչացման պտուղը, ըսածներուն նմանող ըլլալնիս պէտք է որ ըլլայ: Յաջողու-

Թեամբը կատարուելը երբոր իրեն ջանքերուն
 համեմատ չեղաւ, ու շարքու թեամբը որսնելու
 ենք իրեն խօսքերուն յաջող ելք չունենալուն
 տատճառք: «Մէկ լաւ խնայողութիւն մը,
 կ'ըսէ քսենտիոն, իրեն բարեկամ ալ կ'ըս-
 տանայ, թշնամիներ ալ:» Նոյնպէս ու շարքի
 ունկնդիր մ'ալ աղէկ և գէշ ճառերէն օգուտ
 կըրնայ քաղել. հասարակ մտածմունք մը,
 անվայել խօսքի եղանակ մը, շատ յանդուգն
 ձև մը, ուրախութեան կարգէ դուրս նշան-
 ներ՝ երբոր մարդ զինքը գովել մը տեսնէ, և
 այս տեսակ բոլոր պակասութիւններ ուրիշ-
 ներուն շատ աւելի զգալի կ'ըլլան քան թէ
 մեղի, երբոր մենք մեր բերնէն փախցրնենք
 ասանկ պակաս խօսքեր: Ուրեմն այն քննու-
 թիւնները որ մենք ուրիշին խօսքին վրայ կ'ը-
 նենք, մեր յատուկ ճառերուն վրայ ալ դար-
 ձրնենք, լաւ դիտենք որ ուրիշի վրայ երևան
 հանած պակասութիւններնուս մէջը շինանք
 առանց մեր տեսնելուն: Քննու թենէն դիւ-
 րին քան չկայ, բայց անիկա մեղի անօգուտ
 կ'ըլլայ՝ երբոր մեղի մեր պակասութենէն ուղ-
 զելու և միանգամայն անոնց առջև առնելու
 երես չբռնէ: Ան ասուն պէտքը կ'ըլլայ Պղա-
 տոնիս պէս ըսել. «Ես ալ անանկ չեմ արդեօք»:
 Մեր աչքը ուրիշներուն աչքին մէջը կը դժա-
 դրուի: Ուրեմն զննենք մեր ճառերը մեր քրն-
 նածներուն մէջը. ասկէց կը հետեւի որ մենք
 ուրիշի վրայ քննածնիա քիչ մը թեթեւ կեր-
 պով պիտի պախարակենք, և թէ շատ ջանքով

Տերիններուն վրայ պիտի աշխատինք : Օգտա-
 կար է թէ խնամտով և թէ ոճով մեզի տկար
 երեցած ճառ մը մտիկ ընելէն ետեւ , ատենա-
 բանին հետ աստարեղ ելլել , կրթութիւն ը-
 նել այն հատուածներուն վրայ որ մենք պա-
 կասաւոր դատեցինք , յաւելուածներ ընել
 այն խօսքերուն վրայ որ բաւականապէս կա-
 տարեալ չէին , ուղղել անկատարութիւնները ,
 մտաց խորհրդածութեանը դարձուածքներ և
 զանազան խօսքի եղանակներ տալ , կամ նաեւ
 նոյն նիւթին վրայ բոլորովին նոր ճառ մը շե-
 նել , ինչպէս որ Պղատան Վեսիասին մէկ ատե-
 նաբանութեանը համար բրաւ . մասն զի , նո-
 բէն կ'ըսեմ , ուրիշները քննելէն դիւրին բան
 չկայ , անկէ աղէկը շինելէն ալ դժուար բան
 չկայ : Լակեդեմոնացի մը խմանալով թէ Փի-
 լիպոս Օլիւնթեա քաղաքը կործանել է , ը-
 սաւ . “ Ատ մարդուն դիւրին շարտի ըլլայ
 անոր նման քաղաք մը շինելը ” : Թէ որ մենք
 այս գօտեմարտութենէն միայն մէկ տկար դե-
 բազանցութեամբ մը դուրս ելլենք , ան ատեն
 մեր չափաւոր յաղթահարութիւնը մեզի քիչ
 արհամարհող կ'ընէ և մեր անձնասիրութիւնը
 կը լուրջընէ :

Քաղաք և հաճելի և այս կերպ արհամար-
 հող քննութենէ մը շատ հետի բնաւորու-
 թիւնները՝ միշտ զարմացման հակամիտեալ են .
 բայց այս զգացումն ալ բաւական և դուցէ
 շատ նախազգուշութիւն կը պահանջէ : Ամ-
 բարտաւան քննիչ մը ուրիշներուն ճառերէն

քիչ օղոււտ կը քաղէ . մէկ առանց սահմանի
 զարմացող մ'ալ . այն լուծ ճառերուն մէջը
 շատ վտանգներ կը դանել . և Հերակղխտէսին
 առ խօսքը կ'արդարացընէ . « Տկար մարդը ա-
 մէն լամճներէն կը վերաւորուի » : Աւրեմն դռ-
 վէ պարզմտութեամբ այն ատենարանը որ լու-
 կը խօսի . բայց միայն հաւատաւ այն բանին որ
 բնորանօք կ'ըսէ . անոր խօսքին ու անոր գործ .
 քին ներողամիտ վկայ կենալով՝ իրեն օրինակ
 ներուն ճշմարտութեանը և իմաստութեանը
 խիստ նկատող եղիք . ասով առանց մէկու մը
 ատելութիւնը վրայ բերելու՝ հեռու կը վախ-
 շիս այն դէշութեանէն որ կրնար ծագել քեզմէ
 ալ . վասն զի նրչափ սխալմունք . որչափ վը-
 տանդաւ որ կարծիքներ անձերնուս շէնք սեպ .
 հականեր հաճոյականութեամբ և դիւրահա-
 տաստութեամբ : Լակեղեմանիայի մէջ շար սո-
 վորութեան տէր մարդ մը բարի կարծիք մը
 յայտնած ըլլալով . դատաւորները այն կար-
 ծիքը մէկ աղէկ մարդու մը ձեռքով հասարա-
 կութեան առաջարկէլ տուին . կ'ուղէին . այս
 իմաստուն քաղաքականութեամբ վարժեցընէլ
 ժողովուրդը որ կարծիքներու վրայ դատաս-
 տան ընեն ան մարդոց վարմունքովը որ զանանք
 կ'առաջարկեն . քան թէ իրենց խօսքովը :
 Բայց իմաստասիրական նիւթերու վրայ խօսա-
 ղին հեղինակութիւնը մէկ դի գնէնք . ու դա-
 տներ իրերը ինչ որ են ըստ ինքեան : Բեմի մը
 վրայ ինչպէս որ պատերազմի դաշափ մը մէջ
 ալ . շատ բաներ իրենց նպատակ ունին միայն

ծանր՝ ու դժուար հարկեր վրայ դնելու : Ատե-
 նաբանին ձեռնակ մաղերը , շարժումքը ,
 նայումքը , ինչ որ իր օգտին համար կ'ըսէ ,
 մանաւանդ աղաղակները , ծախահարութիւն-
 ները և ուրք գեանին զարմեղները կը զարհու-
 րեցնեն անխորձ երիտասարդը որ ինքրոջինքը
 կը թողու ազխէ քշուելու : Քաղցր , աւաւ
 և վսեմ՝ ոճ մը իրաց խորունկ խմտտը վեր հա-
 նելով՝ պատրանաց ալ կը ծառայէ : Երաժիշտք
 որսնք որ սրինգի մը հետ կ'երգեն , այս դար-
 ծիքին օգնութեամբք ըստ դիպաց ըրած սք-
 խալնին կը ծածկեն , ասանկ ալ հարուստ և
 զարդերով լեցուն ոճ մը կը խաբէ ունկնդիրը
 և կը վրդովէ անոր դատադութիւնը : Մեզան-
 թիտան հարցուցին թէ Գիանէսիտսի մէկ սղ-
 երգութեանը վրայով ինչ կը մտածէ , որուն
 որ ինքը ներկայ էր . « Չկրցայ անիկա սեռ-
 նել , ըսաւ , քանի որ բառերով մթնցած էր ու
 իմաստակներէն շատերը իրենց հրապարակա-
 խօսութեանցը մէջ դո՛ւ չըլլալով իրենց մտած-
 մանքը խօսքի եղանակներու խաբող վարա-
 գութին տակը ծածուկ տահելու , ներդաշ-
 նակաւորեալ ձայնով մը , աւ քաղցր և եղա-
 նակաւոր արտասանութեամբ մ'ալ կ'արուեա-
 տակեն , որ ունկնդիրը կը յափշտակէ մտօք և
 միայն տարապ բերկրութիւն մը կու տայ , և
 ասանաբանին իր անձին ալ նայնալէս տարապ
 փառք մը կը մատուցանէ : Գիանէսիտս բռնաւ-
 ւորը թատրոն դանուելով՝ զժայլեցաւ մէկ
 երաժշտի մը վրայ սրուն որ ունկնդիր էր , և

անոր շատ դեղեցիկ խոստումներն Երուսաղեմ : Տե-
 սաբանք լըմընցաւ , ու Դիանէսիոս անոր բան
 մ'ալ շտուաւ : « Գեղի բան մը պարտք շու-
 նիմ , ըսաւ երաժիշտին . վասն զի դուն որչափ
 որ բերկրու թիւն պատճառեցիր ինձի քու եր-
 դովդ , ես ալ այնչափ բերկրու թիւն տուի
 քեզի յոյսով » : Ասանկ է այն ստակը որով
 պարասպ հրատարակախօսու թիւնները կը վար-
 ձատրուին : Երբոր դեռ կը խօսին , կը զմայլին ,
 լըմըննալէն ետեւ՝ այն հրճուանքը որ անոնց
 մտիկ ընելու համար ունէին ունկնդիրք , կը
 ցրուի , և իրենց փառքն ալ իրենց հեռ . ուն-
 կընդիրները իրենց ժամանակը , ատենաբան-
 ներն ալ իրենց աշխատանքը կը կորսընցընեն :

Չգե՛նք ուրեմն խօսքերու ընդունայն պեր-
 ճու թիւններէն մեզի արդիւնք քաղելու հե-
 տեւիլը : Չգե՛նք՝ այն ծաղկավաճառներուն
 պէս որ միայն ծաղիկներ ու անուշահոտ խո-
 տեր կը ժողովեն փունջեր կաղմելու համար
 իրաւցրնէ հաճոյական , բայց անոնց առօր-
 եայ հաճոյականու թիւնը ամենեկին օգուտ մը
 չ՛թողուր իրեն ետեւէն : Նմանինք մանա-
 ւանդ մեղուներուն որ մանիշակներով , վար-
 դերով և յակինթներով զարդարուած մար-
 դագեափներուն վրան թռչըտելով , նախա-
 մեծար կը համարին խիստ կծու և դառն
 ծաթրինը , անկէ կը ծծեն ինչ որ կրնայ
 մտնել մեղրին բաղադրութեանը մէջ , և այս
 չքնաղ կողոսպուտով բեռնաւորուած , կը
 թռչին շուտ մը իրենց փեթակին մէջը իրենց

աշխատու թեանցը տարապելու : Մէկ խոհեմ
 ու սովելու հետաքրքիր ունկնդիր մը խիստ
 ծաղկափթիթ ոճի մը արուեստակեալ զար-
 դերը պիտի արհամարհէ , և մէկ դի պիտի
 ձգէ նաև հրատարակաստու թեանէն զգացած
 մտածմունքները , պիտի ձգէ անոնք իմաս-
 տասիրութեան իշամեղուներուն ճարակ ը-
 րարու համար . որոնք իմաստակներուն կեղծ
 փայլունութիւնը մտաց տրամաբանութեանէն
 նախամեծար կը համարին : Խորին ուշադ-
 րութեամբ մը պիտի խնդրէ ընդ մտանել
 խօսողին խոկմանը մէջ , անոնց խօսքերէն այն-
 շափ շատ տուող քաղելու համար , որչափ
 սր պիտի կրնայ : Պիտի յիշէ անգագար՝ որ
 չէ թէ թատրոնի մը մէջ խեղկատակ-
 ներ կամ երաժիշտներ մտիկ ընելու կու-
 գայ , հասցա մէկ առաքինութեան դպրոցի
 մը մէջ իրեն կեանքը իմաստուն օրինակնե-
 րու վրայ կանանաւորելու համար : Բուն ի-
 րեն անձին խորը պիտի մանէ , իրեն յատուկ
 սիրտը քննելու , և զննելու այն տպաւորու-
 թիւնները որ լսած ճշմարտութիւնները իրեն
 վրայ կը ներդրածեն . պիտի քննէ թէ իրեն
 կիրքերը իրենց դործունէութեանէն բան մը կոր-
 սնցուցին արդեօք , եթէ ալ իրեն տրամու-
 թիւններէն քիչ կը յաղթուի , թէ աւելի քա-
 ջալերու թիւն ու հաստատութիւն կրտանայ
 արդեօք , թէ բարեցն ու առաքինութեան
 վրայով խիստ ուժով մտաց յաիշտակու թեան
 փորձ առաւ : Երբոր մէկը սասիրիչի մը ձեռք

քէն կ'ազատի, հայելիի առջև կ'երթայ, կը
 դնել թէ մազերը լաւ կտրուէր են, և թէ
 մօրուքը աղէկ շինուէր է: Աւելի ևս իրա-
 ւամբ բեմբասացութեան ասեանէ մը դուրս
 ելլելէն ետեւ պէտք է դնել իր հոգին և տես-
 նել թէ աղատելով ձանձրացուցիչ ախորժակ
 ներքէ որոնց ծանրութիւնը վրան բեռցեր էր,
 աւելի հանդարտ ու քաղցր եղեր է արդեօք:
 «Վասն զի ոչ բաղնիքը ոչ ալ ճառերը օգտա-
 կար կ'ըլլան, կ'ըսէ Արիստոն, թէ որ շմաք-
 րեն »:

Աւրեմն պէտք է իրենց բերկրութիւնը կա-
 տարել այն օգուտներով որ անոնցմէ կը քա-
 ղեն, շէ թէ կը պարտաւորին միտքերնին դնել
 այն գոհունակութիւնը իրենց ուսմանը վեր-
 շանարուն համար, և իմաստասիրի մը դպրո-
 ցէն դուրս ելլել երգ մը գեղգեղելով, յիմա-
 բական ուրախութիւն մը փայլեցընելով, և
 հոսաւէտ իւղերով օծուելով թէ որ պէտք ըլ-
 լայ բաղնիք մանել և իւղով շփուիլ: Թէ որ
 ատենաբանին ճառը կ'ծու ու բարկ եղաւ,
 պէտք է ինքըզինքը խաղաղեցընելու լաւ կեր-
 սըր դիտնալ, այս եղանակաւ մեր մտայ մա-
 ռախաւորը կը փարատի ինչպէս որ ծուխով կը
 վաքնտուին մեղուները իրենց փեթակէն, ան-
 կէց մեղր աւնուած ժամանակը:

Հրապարակաստանները միայն յատկապէս
 շէն պարտաւորիք սճոյն ընալիս և քաղցր ըլ-
 լալուն հոգ տանելու, հասցա պատանի մ'ալ
 առաջուց քիչ պարտաւորութիւն ունի անոնց

զբաղելու : Եւ քերքը կարող կ'ըլլայ անոնց վրայ
 աւելի ժամանակ անցընելու : Իսկոզ մը իր ծա-
 բաւը յագեցընելէն ետեւ , կը դբօսնու զննե-
 լով այն դործուածքը որով որ խմած անօթը
 զարդարուած է : Ինքն ալ նայնպէս ան ատեն
 կրնայ իր ուշադրութիւնը դարձընել լեզուին
 հարրատութեանը եւ զարդերուն վրայ : Վկիւ-
 բէն իրաց արդիւնքին քան թէ Ատտիկեանն ու-
 ճին վայելչութեանը յարկը նմանիլ մ'է անոնց
 որ շէն կամենար գեղթափը ընդունիլ ուրիշ
 ամանէ , հասցա ան հարէ ամանէն որ Աթէնք
 կը շինուի . կամ թէ անոնց որ ճմեռ ատեն թէ
 որ Ատտիկէի ոչխարի բուրդէ շինուած զգեստ
 չունենան , շէն ուղեր ուրիշ հանդերձ հագնիլ
 եւ նախամեծար կը համարին ցուրանէն ընդարմա-
 նալ բարակ ու թեթեւ զգեստներով , Վիւսիա-
 սին ոճին պէս : Այս մոլեգնութեան մէկ
 ներդործութեամբն է որ մեր գպրոցներուն մէ-
 ջը մէկ ընդունայն նրբութիւն մը , մէկ պա-
 խարակելի շատախօսութիւն մը բանականու-
 թեան եւ գեղեցիկ խորհուրդի տեղ անցան :
 Պատանիները այն գպրոցները շէն դար ամլ
 բելու թէ ինչ բաներ պէտք են ըլլալ խմատա-
 սիրի մը վարքը , սախոցթը եւ քաղաքական
 ընթացքը , շէն պարապիր ուրիշ բանի , բայց
 եթէ բառերու եւ ոճերու , արաստանութեան
 գեղեցիկութիւնի , առանց մտածել մը միայն
 ուղելու , թէ ինչ որ իրենց կ'ըսուի , աղէկ
 է թէ գէշ , օգտակար է թէ անպիտան :

Նաեւ կանոններ կան հետեւելու այն հար-

ցումներուն մէջը որ կրնայ մէկը առաջարկել
 մէկ աստե՛նաբանի մը կամ իմաստասիրի մը որ
 հրապարակաւ կը խօսին : Հացկերոյթի ընկեր
 մը կը պարտաւորի ուտել ինչ որ իրեն առջին
 կը դնեն , առանց եւել բան մը ուղելու , ոչ
 ալ պախարակելու անիկա որ իրեն կը հրամ-
 ցրնէ : Նոյնպէս թէ որ մէկը իմաստասիրի մը
 դպրոց կու դայ հոն տեղ ճշմարտութեամբ
 անանելու , պէտք է որ խորին լռութեամբ
 ունկնդիր ըլլայ անոր , մանաւանդ թէ որ ճա-
 ռին նիւթը ծանուցեալ բան եղած ըլլայ :
 Խօսողը ուրիշ նիւթի դարձընելը , անոր խօ-
 սած նիւթէն դուրս օտար խնդիրներ առա-
 ջարկելը , ինքրդինքը ձանձրացուցիչ ընել է ,
 ունկնդիրները յոգնեցրնել , եւ լռածէն ամե-
 նե ին օգուտ մը չբաղելով՝ աստե՛նաբանը շփո-
 թել եւ ճառին թելը կորսընցրնել տալ է :
 Պենելովպէին հետամուտները ծաղը կ'ընէին
 Ադիսեօր , որ կը խնդրէր « Չէ թէ մեծագին
 ընծաներ , հասցա անգին մնացորդներ » : Մեծ
 արժէք ունեցող բաներ տալուն շափ , ան մեծա-
 գին բաները ուղելը մեծ սրտի մը նշանի նման
 կը նկատէին : Ալ աւելի իրաւամբ , ունկնդիր
 մը զինքը ծաղրելու արժանի կ'ընէր , թէ որ
 աստե՛նաբանը տղայական ու անօգուտ խնդիր-
 ներու մէջ ձգէր : Աս բանը երիտասարդաց
 հասարակ եղած պակասութիւնն է : Նրբա-
 մտութեան փորձ ընելու համար , տրամաբա-
 նութեան ու շափաբերութեան մէջ իրենց
 ծանօթութեանը վրայ պարճենալու համար ,

անհունու թեան բաժանմանը վրայ, ըստ տրամագծի և ըստ կիսաառանագծի շարժման վրայ խնդիրներ կ'առաջարկեն: Փիլոսոփանս բժշկը կանչուեցաւ անանկ հիւանդի մը քով, զոր ներքին խոց մը թոքացուռ թեան մէջ ձգեր էր, և որովհետև իրմէն կը խնդրէր ղինքը բժշկել մատին ծոյրը եղած տալարէ մը, Բարեկամ, ըսաւ անոր Փիլոսոփանս, որուն հիւանդին դոյնը ու շունչը այս ներքին հիւանդութիւնը ճանչցուցեր էին, « Հիմա մատիդ վէրքը դախմանելու ժամանակ չէ »: Այսպէս ալ կրնայ այն անխոհեմ երիտասարդին ըսուիլ, Հիմա ասանկ խնդիրներու վրայ պէտքը չէ քեզի կայնիլ կենալ, աշխատէ եւեջօք ինքրդինքրդ ամբարտաւանութենէ, ինքնահաւանութենէ, ցանկութենէ ու սնտոի բերկրութիւններէ բժշկել որոնց դերի եղեր ես, ու քու հոգւոյդ մէջը կատարեալ առողջութիւնը նորէն հաստատել, ամբարտաւանութենէ ու սնտարծութենէ հոգիդ աղատելով:

Աւրիշ մէկ պէտք ըլլալու աշագրութիւնըն ալ խօսողին յաջողակութեանը ու հմտութեանը վրայով ինքրդինքր կանոնաւորելը, և անոր աղէկ գիացած բանին վրայով հարցմունք ընելն է, և ոչ թէ բնական գիտութեան ու երկրաչափութեան խնդիրներու մէջ ձգելն է օրինակի համար այն մարդը, որ բարոյականութեան ու ամուսնի սրբամ է, առաջարկելու չէ քաջ բնագէտի մը որ խմատակներուն ընդունած կամ հերքած կարծիքները դատէ:

Աղտանք մը կացինով բանալու կամ փայտերը
 բանալիով ճղքելու ձեռնամուխ ըլլալը ոչ այն-
 չափ այն գործիքները աւելի տխրի ըլլար, քան
 թէ անանք բանի մը շղործածելու տահմանին
 մէջը կենալ: Այնպէս շնորհունելը որ ասե՛նա-
 բան մը իր ներքի դին եղածը մեզի ընծայէ, և
 բնութեանէ շնորհունած կամ ուսմունքով չըս-
 տացածը իրմէն պահանջելը, անանկ մէկ բա-
 ըիքէ մը զբիւրիլ է, զոր ասե՛նաբանը մեզի կը
 ներկայացնէ, ու չար և չարակամ մարդու
 մը համբուտալ է իր անձին համար:

Արդէն եղած խնդիրներուն վրայ անտի
 պարծանքով մը շատ անգամ հարցմունք ընե-
 շէն ու նարէն ան խնդիրներուն գառնալ գա-
 լէն մեծ ջանքով խորշեցէք: Սորմէլ սիրող
 ու ընկերներուն բաղձանացը զիջանող մար-
 դը հանգարտութեամբ մտիկ կ'ընէ ու ընկե-
 րուն առաջարկած խնդիրները: Բայց սակայն
 թէ որ մէկը ինքը զինքը ստիպուած իմանայ
 անանկ մէկ կիրքով մը զոր տէտք էր շուտով
 սանձել ու պատրաստահան գեղ մը կը պա-
 հանջէր այն կիրքը, Հերակլիտէսին ըսածին
 տէս շատ լաւ կ'ընէր թէ որ խեղոյն իր ցաւը
 յայտնէր ու անոր բժշկութիւնը խնդրէր,
 քան թէ ստրածամ իր ցաւը գալտուկ պա-
 հէր: Թէ որ բարկութեան յուզմունքով մը
 անասաշտ վախով մը, ընտանեկան երկպառա-
 կութիւնով մը, սաստիկ սիրահարութիւնով
 մը շարժած էք “ Թէ որ հողւոյն բաղձանք
 ներք ներդաշնակութիւնը խառնէր էն ” ա-

և որ շարաբ ամօթի մը վախով ատենաբանը
 ուրիշ նիւթերու վրայ դարձրնելէն զգուշա-
 ցէք . ուշագրութեամբ անոր ականջ դրէք
 քանի որ կը խօսի ան բանին վրայով որ
 ձեր անձին օգուտ կ'ընէ , ու երբ որ ատե-
 նաբանը խօսելէն դադրի , զինքը առանձին
 տեղ մը տարէք , անոր հետ աւելի առանձ-
 նակի ան բանին վրայ խօսելու համար : Մի
 ընէք ինչպէս որ շատերը կ'ընեն , որոնք
 քանի որ ատենաբանը ուրիշներուն պակա-
 տութեանը վրայով կը խօսի , դուարձութիւն
 կ'իմանան անոր մտիկ ընելու ու յօժար կամ-
 քով կը դարմանան անոր վրայ : Թէ որ պէտք
 եղաւ իր քննութեանը համար նիւթը փոխել
 ու մէկ աղնուահան ազատութեամբ մը անձ-
 նական ազդարարութիւններ որ իրենց տը-
 ւաւ , ան ատենը կը բարկանան , ու ատե-
 նախօսին անտանելի ու ձանձրացուցիչ դա-
 տաւորի մը պէս կը նային : Անտարակոյս կը
 խորհին թէ պէտք է իմաստասէրները դպրոց-
 ներու մէջ մտիկ ընել , ինչպէս որ թատրոն-
 ներու մէջ դերասանները , և թէ քաղաքա-
 կան կենաց դորձերու մէջ անանկ բան մը
 չ'ունին որ զիրենք մարդոց հասարակ եղած-
 ներէն որոշէ : Ա՛րնդ ունիմ առ խօսքը իմաս-
 տակներու համար , որոնք իրենց ամպիո-
 նէն իջնալնուն պէս , իրենց դիրքերուն ու
 ատենաբանութիւններուն հետ մեկտեղ ի-
 ռենց կերպարանքի ծանրութիւնն ալ մէկդի
 կը ձգեն , ու ամենէն եւել հարկաւոր կե-

նաց ընթացքին գործքերուն մէջը հասարակ
 աւանդիկն շատ փոքր ու շատ ցած կ'երևան :
 Բայց ճշմարիտ փիլիսոփաներուն մէջը մէկ
 ծանր խօսքը , մէկ կատակը , մէկ գլխով ակ-
 նարկութիւն մը , մէկ թեթեւ խնդալ մը , մէկ
 խիստ դէմք մը , ու մանաւանդ թէ տուած
 անձնական ազդարարութիւններնին , մէկ ճրշ-
 մարիտ օգտակարութիւն մ'են անսնցմէ ճրշ-
 մարիտ օգուտ քաղել գիտցողին :

Կաւս պէտք է ատենաբաններուն գովու-
 թիւն տրուած ատենը ճիշդ միջասահմանու-
 թիւն մը պահել : Աս բանին թէ պակաս ը-
 նելը և թէ չափազանցութիւնը միօրինակ
 պակասակելի են : Աւելնողիւր մը ատելի կ'ըլ-
 լայ , երբոր պաղ ու անշարժ , դաղտնի ինք-
 նահաւանութիւնով մը ու իր անձին սնտոխ
 համարումովը լեցուն ու համոզուած թէ ին-
 քը շատ աղէկ կրնայ ըսել , հաւնելու նշան
 մ'ալ շքուցներ , բերնիկն դո՛հ ըլլալը յայտ-
 նող խօսք մ'ալ չհաներ : Աս յամառ լու-
 թեամբ , այս բնական չ'եղած ծանրութեամբ
 խորախորհուրդ և հաստատամիտ մարդու մը
 անուն ունեցող կը կեղծաւորի : Անանկ կար-
 ծող կ'երևայ թէ գովութիւնը ստակի պէս
 է , ու թէ որ ուրիշ մը անիկայ ընդունի , ի-
 բն համար կը կորսուի : « Իմաստասիրութե-
 նէն քաղած պտուղս , կ'ըսէր Պիւթագորաս
 բանի մը վրայ ալ չդարմանալս է » (4) : Կան
 մարդիկ որ աս խօսքին իմաստը աղէկ չհաս-
 կրնալով ու արժանապատուութիւնը ամբար-

տաւանաւ թեան հետ շիտթելով, մէկը չեն
 ուղեր պատուել ոչ ալ գովել, ու արհամար-
 հող կ'ըլլան: Իմաստասիրութիւնը, իրաւ է,
 մեզմէ զարմացումը ու սքանչանալը կը վեր-
 ցընէ. սրանք որ տգիտութենէ ու տարա-
 կուսութենէ կը ծնին. բայց քաղցրութիւնը ր
 մեծահոգիութիւնը ու բարեօրտութիւնը չը
 խանգարեր: Ստուգապէս առաքինի մարդը
 երբէք ուրիշ բանով ինքրզինքը պատուեալ
 չկարծեր, հասլա միայն այն յարգանօք որ իրեն
 կը տրուի արժանաւորութեան համար: Այն
 իրեն տրուած պատիւները իրեն անձին ա-
 մենէն գեղեցիկ զարդ են. ու իր գերազան-
 ցութիւն առանց նախանձու ուրիշին կը հա-
 ղորդէ: Աւրիշները գովելու շատ խնայողու-
 թիւն գործածողը կը յայտնէ մէկ մեծ շքաւո-
 րութիւն մը ու շատ անյադ ցանկութիւն մը:
 Ասոր հակառակն՝ կան մարդիկ, որ իրենց բնա-
 կան թեթեւամտութեամբը յափշտակուած,
 առանց որոշման գովութեան շռայլութիւն
 կ'ընեն ու ամէն մէկ խօսքի վրայ կ'ըսքան-
 շանան: Շատ անգամ ալ խօսողին հաճելի
 չեն ըլլար, և միշտ ան ունկնդիրներուն ալ որ
 անանց շնամանկուն ամօթով կը բռնադա-
 տուին իրենց կամացը հակառակ ամէն վայր-
 կեան գովելու և ազադակ վերցընելու: Իրենց
 գովութիւնները շատ ապացուցանող ու անոնց
 մէջ շատ սաստիկ եզրղները, լսած ճշմարտու-
 թիւններուն օգուտ մ'ալ չեն քաղեր, ու
 ծաղրածուի, շողքորդի կամ տգէտի տեղ

կը դրուին : Գատաւոր մը իր ատեանին ա-
տենը առանց կողմնակցութեան և առանց
ատելութեան պարտաւոր է մտիկ ընել եր-
կու կողմերուն , ու երեւան ելած ճշմարտու-
թեան համաձայն արդար վճիռ տալ : Բայց
գրագիտական ժողովներու մէջ չկայ ամենեւին
օրէնք , ոչ ալ երգումն , որ ատենաբաններուն
վրայ եղած զգացումները արդիլ է : Կախնիք
Հնորէք ըսուած կուսքերը շեքմէսին բուն
տաճարին մէջը կը դնեն : Ասով կը յիշեցընեն
թէ ամենեւին ուրիշ անանկ տեղ չկայ ուր որ
աւելի պէտք ըլլայ հաճոյականութիւն ու
քաղցրութիւն մացունել , ինչպէս որ բեմի մը
մէջ : Չէին համարէր ատենաբան մը հանձա-
րէ այնչափ զուրկ , ինքիբեներ կամ նախնեաց
նմանելով դեղեցիկ մտածութիւն մը առաջ
բերելու անյաջողակ ըլլալուն համար , իր նիւ-
թը հոգածութեամբ ընտրելովը , գոնէ անի-
կա աղէկ տեղաւորելովը , ու անիկա պատ-
շաճ բացատրութիւններով հազուէցընելովը :
Գիտեն թէ

Մտերններուն ու եկբաններուն փշոտ ծոցը
Անուշիկ մանիշակին ծաղիկ բանալը տես-
նուած բան է :

Չեքմին ու փախելուն հրապարակաւ պատ-
մուած գովութիւնը բաւական հաւնողներ
գտած է , ու մարդս ուզած պիտի ըլլար
թէ խնայտասիրի անուն ու համբաւ ունե-
ցող մարդու մը շինած ճառք , ներողամիտ
ու հեղահամբոյր ունկնդիրներուն մէկ քանի

գովու թիւններու նիւթ չարատրատեր : “ Ա.
 ո մէն սիրուած նիւթեր , կ'ըսէ Պղատոն իր
 ո հասարակապետութիւն անունով գիրքին մէ.
 ո ջը , փափուկ սրտի մը վրայ տպաւորութիւն
 ո կ'ընեն : Տափակ քիթի համար՝ գեղեցիկ է
 ո կ'ըսէ , արծառունկին համար՝ թաղաւորա.
 ո կան է . ճերմակ երեսի գոյն ունեցողնե.
 ո բուն համար՝ Ատուծոյ սրտիք են . սեւ.
 ո կեկներու համար՝ մարդիկներու կերպարանք
 ո ունին . շկայ բան , ինչուան հիւանդութենէ
 ո պատճառած գեղնութիւնը յարմար անու.
 ո նով մը կը բացատրէ , ու իր սիրոյն արժա.
 ո նի կը դատէ ո : Ասան զի սէրը՝ բազեղի
 պէս է որ ամէն բանի կը փակչի : Շատ զօ.
 րաւոր իրաւամբք գրագէտ մարդ մը միշտ
 ճշմարիտ պատճառ մը գովելու խօսք պիտի
 գանէ :

Պղատոն՝ Վեսիտի գրուածքին մէջը նիւ.
 թին գիւտը ու շարքը կը պախարակէ , բայց
 ոճերուն յտակուցութիւնն ու ներդաշնակու.
 թիւնը կը գովէ : Գուցէ մէկն ալ կրնար պա.
 խարակել Արքիլոգոսին գրոցը նիւթերուն
 ընտրութիւնը . Պարմէնիդէսին տաղաչափու.
 թեան անհոգութիւնը . Փիսկիւղխտէսին շատ
 մեծ պարզութիւնը , Եւրիպիդէսին երկա.
 բաբանութիւնը և Սափակղին անհարթու.
 թիւնը : Ասանկ ալ ատենաբաններուն մէջը ,
 մէկը՝ բարուց նկարագրութեանը մէջ պակա.
 տութիւն կ'ընէ . միւսը՝ կիրքերու վրայ թուլ
 կը խօսի , ուրիշ մը՝ վայելչութենէ զուրկ է .

բայց սակայն ամէն մէկը իրենց կիրք շար-
 թելու ու հաճոյանալու յատուկ հանձարը
 ունին, որ տեղի կուտան ունկնդրաց՝ իրենց
 հաճութիւնը գործով յայտնելու: Նաև կան
 ատենաբաններ որ բացայայտ հաւանութիւն
 չեն պահանջեր: Քաղցր ու շորհալի նայ-
 ուածք մը, զուարթ դէմք մը, զիրենք մտիկ
 ընողներուն կողմէն հանդարտ կենալ մը, բա-
 ւական է իրենց: Ասոնք սովորական բաներ
 են, ու թէ որ ուղենք ասանկ ըսել, նշան,
 նաեւ ան ատենաբաններուն համար որ քիչ
 յաջողութեամբ գործերնին գլուխ կը հա-
 նեն: Չկրնար մէկը օրէնքէ ազատ համար-
 ուիլ, երբոր անոնց մտիկ ընելու ատենը ու-
 նենայ համեստ կերպարանք մը, մարմինը շե-
 տակ ու հաստատ նայուածքը ատենաբաննե-
 րուն վրայ անքթիթ, բոլոր անձամբը ու-
 շադրութեան կերպարանք մը, երեսին վրան
 քաղցր հանդարտութիւն մը նկարուած, որ
 կը ցուցնէ թէ պախարակող ու անհամբոյր
 չըլլալով, ուրիշ մտածմունքի զբաղած չէ,
 ոչ ալ ուրիշ ջանքով երկու միտքի վրայ,
 հասցա միայն անոնք լսելու ջանքով: Ամէն
 բաներու մէջ բարին վախճան է շատ օրակի-
 սութիւններու, որոնք մէկտեղ կը պսակեն ու
 կը կազմեն իրենց համաձայնութեամբը կա-
 տարեալ ներդաշնակութիւն մը: Ասոր հա-
 կառակ չարիք, շատ փոքր օրակիսութեան մը
 շափաղանցութենէն կամ պակասութենէն իտ-
 կոյն առաջ կուգան: Օրինակի համար, ա-

տե՛նաբանի մը վրայ կնճռած ճակատ մը ,
խիտ դէմք մը , աստանդական աչքեր , վար
ճռած մարմնոյ դիրք մը , անհողութեամբ
իրարու վրայ դրուած ստքեր , ալ աւելին ը-
սեմ , աչքի քթիթ մը , գլխով նշան տալ մը ,
քովինին ականջն 'ի վար բառ մը բտելը , ե-
րեսանց եղած խնդալ մը , անվայել յօրան-
ջումներ , տխուր ու մտախորհ կերպարանք
մը , և այս տեսակ ամեն բաներ կշտամբանաց
արժանի պակասութիւններ են , որոնցմէ մեծ
ջանքով զգուշանալ պէտք է :

Ունկնդիրներուն շատերը կը համարին թէ
բոլոր պարտքը ատե՛նաբանին կողմն է որ իր
նիւթը աղէկ պատրաստէ , իսկ իրենք բան
մը չունին ընելիք : Ուստի վայելութեան
պահանջածը անգամ չմտածելով , կուզան
ժողովքին մէջը իրենց տեղը կը բռնեն . ինչ-
պէս որ կոչնական մը կուզայ սեղանը կը
նստի , ըստ ամենայնի իր հաճոյիցը ուղա-
ծին պէս , երբ կոչնատէրը շատ նեղութիւն
կը կրէ իրեն աղէկ ընդունելութիւն ընելուն
պատճառաւ : Ու թէ որ կոչնականի մը
զգուշանալը վայելուչ բան է , ալ աւելի իրա-
ւամբ ունկնդրի մը , քանզի ինքն , թէ որ ա-
ռանկ ըտել արժան է , ճառին մէկ կէսն է .
ուստի պարտաւորած ալ է ատե՛նաբանին
օգնելու : Արդեօք անոր բոլոր պակասու-
թիւնները ամենայն զգուշութեամբ քննելու ,
անոր բոլոր խօսքերն ու շարժմունքները
կշռելու համար պիտի երթայ , երբոր ինքն

ալ կը հաւատայ թէ կրնայ մտիկ ըրած ա-
տենը հաղարաւոր անխցել գործքեր ընել,
որոնց վրայ մէկն ալ իրաւունք չունենայ ցա-
ւելու: Երկու գնդակի խաղ խաղցողներ ա-
ղէկ կամակից պիտի ըլլան գնդակը պէտքե-
զածին պէս նետելու ու բռնելու: Ասանկ
է ասենաբանին և ունկնդրին մէջն ալ յար-
մարութեան փոխադարձ սպարտաւորութիւ-
նը, որ իրարու կողմէ շատ զգուշաւոր միա-
բանութիւն կ'ուղէ:

Այն զուրջուածքին եղանակը որ գովելու
համար կը գործածուի, չըլլալու է ամենեւին
պաղ կերպով: Չսիրէր մարդ Եպիկուրասին
գրոցը մէջ կարդալ որ իր բարեկամներուն
նամակները իր աշակերաններուն կողմէն շա-
փազանց գովութիւններու սրտածառ կ'ըլլա-
յին: Ասն՝ որ մեր ժողովներուն մէջ ան-
սովոր բառեր բերնելնուն գուրս կուտան,
կը պօռան թէ Աստուածային է, Երկնային է,
նմանը չկայ, որպէս թէ բաւական չէին Պղա-
տոնին, Սոկրատին և Հիպոկրիտէսին մէջի-
սա հասարակ զուրջուածքին եղանակները:
“ Աղէկ է, խելացութեամբ մտածուած է,
բնական կերպով գրուած է ”: Չափազանց
գովութիւնները զուրջողը անպատիւ կ'ընեն,
ու նոյն իսկ ասենաբանին ալ անիրաւու-
թիւն, կարծել տալով թէ իրեն պէտք էին
այն գովեստները որոնց միայն սնասպարձու-
թիւնը կրնայ ցանկալ տալ: Աւրիշներ՝ որ իրենց
եղանակին մէջ քիչ չափազանց չեն, եր-

Գուճու ալ կը գործածեն իրենց հաւնելու՛ն
 վկայութիւն մը ըլլալու համար . պիտի ըսեն
 գուցէ թէ ասեաններու մէջ ճշմարտութեան
 վկայելու համար կայնամ են . ասանք պատ-
 շաճողութեան ցուցուցած մէկ մասացու-
 թեամբ մը , խնայողութիւն մը կը գովեն նրբու-
 թեանը համար , ծեր մը՝ խորամանկութեանը
 ու գեղեցկութեանը համար , խնայողութեան
 հան անձանց վրայ գարծընելով այն որպիսու-
 թիւնները որ կը պատշաճին գպրոցներու մէջ
 զբօսանք ընելով գործածող պատանեկաց ճա-
 ւոմարանութիւններուն . ու խնայողութեամբ
 լի ճառերուն այն գովութիւնները կուտան ,
 որ միայն պաշտականներու գործածելիք է .
 ասիկա ըմբիշին գլուխը շուշանէ կամ վար-
 գէ պսակ մը դնել է մտխանակ գամինիէ
 կամ ձիթնէի պսակի : Եւրիպիդէս կը կար-
 գար երաժիշաներուն առջև , որ իր սղբեր-
 գութիւններէն մէկուն մէջը պիտի երգէին ,
 այն երգին կատրը՝ որ շատ ներգաշնակու-
 թեամբ շինուած էր . մտիկ ընողներուն մէկը
 սկսեց խնդալ . բանաստեղծը անոր ըսաւ . « Թէ
 որ դուն գատողութենէ ու արտաբանէ զուրկ
 չըլլայիր , չպիտի խնդայիր Վիգականախառն
 (միքսո լիտիէն) եղանակի վրայ շինուած
 երգի մը վրայ (5) » : Խնայողութիւն մը , պաշ-
 տօնատէր անձ մը , խիստ ապացուցանող ուն-
 կրնորի մը անչափաւոր բուն կիրքերը պի-
 տի կրնար նայելէս ասնձել , ըսելով . « Թէ որ
 ըսու գատողութիւն ու խելք ունենայիր , եր-

դողի ու պարողի կերպարանք պիտի շունե-
նայիր ան ատեն, երբոր ևս աստեղ բարոյա-
կանութեան, կրօնի, քաղաքականութեան
ու կառավարութեան դասեր կուտամ և
իրաւ ցրնէ ինչ անկարգութիւն է, որ խմաս-
տասիրի մը խօսած ժամանակը հոն նստող-
ները անանկ մեծ աղաղակներ հանեն ու այն-
չափ աղմուկ, որ ճամբէն անցնողները կարող
ըլլան կարծել թէ երաժիշտներու կամ պա-
րողներու գովութիւն կը արուի հոն :

Ամենեւին չեմ ուզեր որ պատանի մը յան-
դիմանութեանց անողոյս ըլլայ, անոնք որ ըն-
դունած կշտամբանքներնին քիչ վրանին առ-
նելով, միայն անոնց վրայ կը խնդան, ու զի-
րենք յանդիմանող մարդոցը գովութիւն ալ
կ'ընծայեն, կը նմանին այն հացկատակնե-
րուն որ ամենեւին այնչափ չեն գովեր ան
մարդիկը որ զիրենք կը սնուցանեն, որչափ
որ անոնցմէ հայհոյութիւն մը լրած ատեն-
նին, կ'ուզեն արիութիւն ցուցրնել ան բանը
որ անամօթութիւն ու լրբութիւն է : Պա-
տուաւոր մարդ մը կրնայ իրաւ առանց ա-
նիրաւելու ուրախութեամբ համբերել փա-
փուկ ու ճարտար զուարճախօսութեան մը,
որ նախատական բան մը շունենայ, նաև
ասիկա այն ազատ համարձակութեանը նը-
շանն է որ Ստարաացիք բնաւորութիւն ը-
րած էին : Բայց բոլորովին տարբեր բան է,
երբոր յանդիմանութիւնը ուղղութեան կա-
րօտութեանը վրայով ըլլայ, ու հետը մէկ

տեղ ունենայ անանկ խիստ խօսքեր՝ որ դեղը
ալ աւելի լեղի կ'ընեն : Ան պատանին որ ան
ատեն տրամուխեան մէջ շինալով ակամայ
քրտինք մը , սաստիկ խռովութիւն մը , զին-
քը վերաւորող ներքին խղճի խայթ մը կ'ըզ-
գայ , այս նախատինքները հանդարտ կեր-
պով մը մտիկ կ'ընէ , ու միայն անվայել զը-
ւարձախօտութեամբ անանց պատասխան կու-
տայ , փորձով կը ցուցնէ թէ իր սրտին մէջ
բոլոր առաքինական զգացողութիւնները մա-
րած են . թէ մոլութեան հինցած սովորու-
թիւնը զինքը ամենալու անողորբելի ըրեր է .
թէ իր սիրտը գէշութեան մէջ կարծրացեր է ,
մարմնայ այն տեղերուն նման ուր որ կոշտեր
կը գանուին . փրկարար մէկ խղճի խայթի
մը հարուածով չ'կրնար ամենեւին արթըննալ :
Ան ալ որ բոլորովին հակառակ բնաւորու-
թեամբ իրենց եղած առաջին յանդիմանու-
թիւններով այնպէս կը փնասուին որ իմաս-
տասիրութիւնը կը ձգեն կը փախչին ու ա-
ռանց դառնալու կը թողուն անիկայ : Աս
եռանդուն գիւրաղգամութիւնը որ ասոնք
բնութենէ ընդունած են , առաքինութեան
պատրաստականութիւն մ'է , բայց ասիկա
իրենց անխելք փափկութեամբ անօգուտ
կ'ընեն : Օգտակար յանդիմանութիւններու
արիութեամբ համբերելու անյարմար ըլլա-
լովն , գէպ 'ի զիջանող դասատուներուն ,
ճարպիկ ու շողօքորդ իմաստակներուն կը
դառնան , որոնք հաճոյական բայց փնասա-

կար խօսքերով զիրենք կ'ըզբօսցընեն : Հիւ
ւանդ մը որ շատ ցաւ տուող անդամահա
տու թենէ մը ետեւ բժշկին ձեռքէն վախշէր
առանց սղասելու որ իր վէրքը կապուի , փոր
ձով ուրիշ բան չսխտի յայտնէր , բայց միայն
թէ վիրաբու թին դարմանատրու թիւնը գրծ
ուարին բաներ ունի , առանց անիէ ցուերուն
դիւրու թիւն մը ընդունելու : Ասանկ ալ
պատանի մը որ խիտտ ու վշտացընող յանդի
մանու թիւնով մը վիրաւորուած ըլլալով , խ
կոյն կը ձգէ կը հեռանայ առանց ժամանակ
թողելու որ վէրքերը գոցուին , խնստասիրու
թենէն մի միայն խայթուածներ կ'առնէ հեռ
կը տանի , որոնցմով որ իր սիրտը վիրաւոր
ուեցաւ , ու անոնցմէ օգուտ մ'ալ չբաղէր :
« Ան երկաթը որ զինքը խոցեց , իրեն դեղ
պիտի ըլլայ , » ըսաւ Եւրիպիդէս , Տեղեփա
նին համար (6) :

Ասանկ ալ խնստասիրու թիւնը կը բժրչ
կէ պատանեաց տուած վէրքերը , նոյն խի
ան վէրքերը սլամաւսղ խօսքերով : Անք է
մեղի վիրաւորող նեւերը զգալ , բայց չէ թէ
կործանիլ ու յուսահատիլ : Վնաստասիրու
թիւնը առաջ գծուար լուացմանքներ , վախ
նալու արարողու թիւններ կ'առնենայ , դադու
նիքներու մէջ խորհրդազգաց ըլլալուն պէս ,
բայց նոյն խի վրդովման ու յուսահատու
թեան մէջը քաղցր ու մխիթարական լոյս մը
նշմարել կաւտայ : Աղէկցընող յանդիմանու
թիւնները արժանաւոր բաներ չեն արդեօք :

Ամենէն աղէկը ան է որ համբերութեամբ
 ինչուան վերջը մեզ յանդիմանողին մտիկ
 ընենք, ու երբօր լամնցրնէ, անոր քովը մօ-
 տենանք մեզ արդարացրնենք, ու իրեն ա-
 դաչենք որ մէկ ճշմարիտ սրահասութեան մը
 համար միայն սրահէ մեր վրայով ցուցուցած
 աղատաբերանութիւնն ու ջանքը:

Գիտութեանց և արուեստից սկզբունք-
 ները, միշտ մթութեամբ լեցուն ըլլալուն
 համար, շատ աշխատութիւն կը պահանջեն
 ու շատ ներութիւն կը պատճառեն. բայց
 օրէ օր եղած յառաջադիմութիւնները որ սօ-
 վորութիւն կ'ըլլան, մեզի անոնց ուսմունքը
 շատ դիւրին կ'ընեն. ամէն բանի, թէ որ շի-
 տակը կ'ուզես ըսել, քիչ քիչ ընտանեկաւ
 կ'ըլլայ ու մեզի սովորութիւն: Այսօրէս կե-
 նաց ընթացքին մէջը, յաճախ առեւտուրը
 մարդոց մէջ խիտ մտերիմ կապակցութիւն մը
 առաջ կը բերէ: Կնաստասիրութիւնը՝ սկիզ-
 բէն թէ խօսած նիւթերուն մէջը, և թէ
 գործածած սճերուն մէջը միայն սրահ ու
 անախարժելի ցամաքութիւն մը կ'երևցրնէ:
 Պէտք է ստոր համար այն առաջին երևոյ-
 թէն վախնալով վատասրտութեամբ փախչիլ
 ու առանց դառնալու խնաստասիրութիւնը
 ձեռքէ թողուլ. սէտքը է որ ամէն բան
 փորձենք, ամէնն ալ գործածենք հաստատ
 առաջադրութեամբ, անդադար նոր յառա-
 ջադիմութեանց դէմ դնենք, ինչուան որ
 ստանանք այն սովորութիւնը որ վերջապէս

մեղի արդէկ եղած ամէն բաները մեղի հա-
 ճոյական կ'ընէ : Այս ստիպում թիւնը դարձու-
 շուշանար , ե. իր ներկայութիւնը մեր ուս-
 մանքնէրուն վրայ առատ լոյս մը կը տարա-
 ծէ . ան մեղի կը բորբոքէ առաքինութեան
 այն սիրովը որ միայն մեղի հաստատութեամբ
 իմաստասիրութեան յարիւ կուտայ : Երկչոտ
 ու ծոյլ սիրտէ մը զատ ուրիշ ո՞վ կրնայ
 համբերել ամեն տեսակ կենաց ընթացքի , որ
 զինքը իմաստասիրութեանէն պիտի բաժնէ :
 Պատանիները առանց քաջ տեղեկութեան ,
 իրաւ է , իմաստասիրական նիւթերու մէջ
 յաղթելու շատ դժուարութիւններ կը գրա-
 նեն . բայց խիստ շատ անգամ բուն իրենց
 մէ պէտք է հասկրնան այն մթութիւնները ,
 որ անոր մէջ կը պատահին : Ամենուն մէջն
 ալ սխալմունքը մի և նոյն է , թէպէտ և
 զանազան պատճառներէ ըլլայ՝ բնաւ որու-
 թեանց զանազանութեանը համեմատ : Ամանք
 իրենց վարպետին ձանձրացուցիչ ըլլալու վա-
 խով կամ ամօթով բռնուած , հարցրնելու
 չեն համարձակիր որ իրենց գաղափարները
 բռնաւորէ ու հաստատէ , անանկ կը ցու-
 ցրնեն թէ ամէն բան ըմբռնած են , ու
 բան մը ստացած չեն : Աւրիշներ՝ անխցել
 հարարութեամբ ու սնտոյի նախանձաւորու-
 թեամբ , կամ զիւրին ըմբռնում ունեցող ե-
 րեւալու համար , կը հաստատեն թէ ամենն
 ալ լսեր են , թէ և բան մ'ալ հասկրցած
 չըլլան : Ասկէ ի՞նչ կը հեռուի . անանք սրտնց

ամօթը պատճառ եղեր է ըստ թիւն պահելու, դասառութենէն ետեւ առաջուն պէս անհաւաստի ու շփոթամ, կը բռնադատուին ալ աւելի ամօթով դալ ձանձրացրնել իրենց վարպետը, ու անոր արդէն բասածը կրկնել տալ: Յանդուգն ու անբարտաւան մարդոց համար ալ կ'ըսեմ թէ միշտ իրենց ազիտութիւնը ծածկելու ջանք ունենալով, անդարմանելի կ'ընեն իրենց ազիտութիւնը:

Հաւատարապէս հեռու փախչինք թէ մանց փախկտութենէն և թէ ուրիշներուն ազիտութենէն: Մի միայն զուրցուած բոլոր օգտակար խօսքերը աղէկ միտք առնելու ու հասկրնալու զբաղելով, իմաստասիրութեան հասնելու համար թէ որ պէտք ըլլայ, համբերենք ան մարդոց ծաղր ընելուն ալ որոնք ինքրդինքնին մեղմէ աւելի խորունկը մտած կը կարծեն: Աս կողմէն նմանինք Ազանթասին ու Քսենոկրատին: Ասոնք իրենց դարնկերներէն աւելի ծանր ու ուշ առնող մտք ծնած ըլլալով, անոնց ծաղրածութեանը նիւթ եղած էին: Ա'ըսէին թէ նեղ բերնով ամաններու կամ սղինձ տախտակներու նման շատ դժուար կը բռնեն իրենց արուած դասերը, բայց աղէկ միտքերնին կը սրահեն: «Պէտք է կ'ըսէ Գոկիւղիտէս, աղէկ մարդ ըլլալու համար, խաբուած ըլլալ»:

Դեռ առ ալ բաւական չէ, պէտք է ծաղր ալ ըլլալ, այսպիսով, հազարաւոր

արքայ ծակող կատակներու ենթակայ ալ ըլ-
 լայ, շատ մեծ ջանքերով ազխուած թիւնը յաղ-
 թելը գլուխ հանելու համար: Ասոր հակա-
 աակ կան պատանիներ, որ մտաց բնական
 ծուրածեամբ շատ նեղութիւն կուտան ի-
 րենց վարպետներուն: Առանձին ընել կըր-
 ցած աշխատութեան հակառակ, վարպետին
 քսածը աղէկ հասկընալնուն տեղը կը ձանձ-
 րացնեն, կ'աշխատեցնեն, մի և նոյն բանը
 հազար անգամ հարցնելով: Դեռ մետուր-
 նին չբռնած ան մանր թռչուններուն պէս
 են որ ամեն վայրկեան իրենց մօրը կտուցն
 'ի վեր կը յօրանլեն, անկէ ծամուած կերա-
 կուր ընդունելու համար: Ուրիշներ՝ շատ
 անցարկար հասակնուն մէջ աշտարակու կու-
 րովամիտ մարդոց պէս երեւալու համար ի-
 րենց ձանձրացուցիչ շատախօսութեամբը ա-
 տենասխօսին հագին կը հանեն, անդադար
 կ'առաջարկեն անոր շնչին տարակոյսներ, ու
 հազարաւոր անօգուտ բացատրութիւններ կը
 խնդրեն. «Ասիկայ շատ կարճ ձամբան երկրն-
 ցրել է, ըսաւ Սոփակը, չէ թէ միայն իրենց
 համար, հազար ուրիշներուն համար ալ»: Ս-
 իրարու վրայ ոչինչ ու աւելորդ խնդիրներով,
 ու խօսքէն դուրս շեղելով՝ ատենաբանին
 հարցմունքներ ընելով, անոր առաջ երթա-
 չը կախ կը լծողուն ու սորվեցուցածին կար-
 զը կարսընցրել կուտան: Ար նմանին, կ'ըսէ
 շիւթակնիմու, ան վախկտա ու անպիտան
 շուններուն որ ամբողջ մէջ վայրի գազաննէ-

բուն մարթը կը խածնեն ու վրայի մազերը
կը վրցընեն, բայց անտառին մէջը չեն հա-
մարձակիր դանկ անոնց քիչ մը մօտենալու :

Ծանր ու ուշ միտք առնողներուն ետ
խրատ կուտամ որ խօսուած նիւթին գլխա-
ւոր կետէրը աղէկ ըմբռնելու նային, ետքն
ալ անոնք ամբողջացնելու ջանան, ու իրենց
յիշողութեան օգնութեամբք դանկն, ինչ
որ պէտք է անոնց վրայ եւելցընել : Ան միտ-
քը սրահած քիչ բանը, առաջին սերմի մը
պէս պիտի ըլլայ և ուրիշ բանի պիտի շղայ
հապա աճելու ու սնանելու : Միտքը սմա-
նի պէս չէ որ մինակ լեցընելու կարօտ ըլլայ :
Դիւրամառ նիւթերու նման առաւել կա-
րօտ է անանկ ճարակի մը որ զինքը տաքցը-
նէ, ու ժ տայ իր կարողութիւններուն ու
զինքը բորբօքէ ճշմարտութիւնը փնտռելու :
Ի՞նչ պիտի ըսէիր ան մարդուն որ իր դրա-
ցիին տունը կրակ ուղէլու երթալով, ու
վառարանը կրակով աղէկ մը լեցուն դանկ-
ով, նստէր հան ապքնալու ու իր տունը
դառնալ շմտածեր, ահա այն պատանու այն օ-
րինակը, որ իմաստասէրէ մը դաս առնելով,
անոր խօսքերէն ելած տարբութիւնը իր սրբ-
տին մէջը մտցունելը անձին շտեղհականե-
լով ու միայն լսելու մը բաւականանալով,
հանդարտութեամբ անոր քովը նստած կե-
նայ : Պիտի կրնար ան խօսքերէն գլտու-
թեան երեւոյթ մը ստանալ այն փայլուն
կարմիրութեանը նման, որով կրակը մեզի կը

ներկէ • բայց իմաստասիրութեան տարու-
 թիւնը՝ հոգիին փակած ժանգը շախտի քա-
 կէր • ոչ ալ անոր լոյսը՝ հոգւոյն խաւարը
 պիտի փարատէր : Աս նիւթին վրայ տուած
 բոլոր կանոններուս վրայ միայն աս խօսքն ալ
 պիտի եւեկընեմ • այսինքն՝ մի և նոյն ատեն
 որ մէկը սերիշներուն դասերէն բան կը սով-
 րի • պէտք է կրթութիւնն ընել ինքն ալ հնա-
 բելու ու շարադրելու : Աս միջոցով իր ուս-
 մունքէն պիտի ստանայ չէ թէ սնասպարծ
 գիտութիւն մը իմաստակներուն պէս • կամ
 թէ պարզ զննութեան ծանօթութիւն մը •
 հասաւ ճշմարտապէս իմաստասիրական գի-
 տութիւն մը որ հոգւոյն մէջ մշտատեւ սովո-
 րութիւն մը պիտի ձեւացընէ • վասն զի ա-
 ղէկ սենկնդրութիւն ընելու յօժարութիւնը •
 աղէկ կեանք վարելու սկզբնաւորութիւն մ'է :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԻ

(1) Այս օրինակը Դ • Հենրիկասին մէկ
 գեղեցիկ պատասխանը յիշեցընել կուտայ :
 Իբե՛ն պաշտասկաններուն մէկը կ'ըսէր թէ
 դուք շատ իշխանութիւն չունէիք հռոշելա-
 քաղքին վրայ : Հենրիկաս անոր պատասխան
 տուաւ թէ « Այդ քաղքին մէջը ինչ որ
 կ'ուզեմ կ'ընեմ • վասն զի հոն ուրիշ բան չեմ
 ընէր • եթէ ոչ ինչ որ կը պարտաւորիմ » :

(2) Բուն Յունարէն բնագրին մէջը աւանկ գրուած է « քաղաքացւոց ցուցակին մէջը արձանագրուած անձանց մէջէն » : Յունաց և Հռովմայեցւոց մէջ հասարակաց դիւաններուն մէջ կ'արձանագրուէին թէ՛ քաղաքացւոց տղաքը՝ երբոր օրինաց պայմանած հասակը հասնէին , և թէ՛ օտարները՝ որոնց որ հասարակապետութիւնը քաղաքացիութեան արտօնութիւն կը շնորհէր :

(3) Բանամարտի կռիւներու մէջ ըմբիշները տեսակ մը ձեռնոց կը գործածէին որ խիստ կարծր , շատ մը իրարու կարուած և երկաթէ թիթեղներէ խառն կաշիներով շինուած էր : Իրենց ահանջներն ու քունքը պատասպարելու համար ալ ուր որ հարուածը կրնար մահացու ըլլալ , ահանջնին տեսակ մը կաշիէ կամ պղինձէ աղբնջապանակով կը ծածկէին :

(4) Յունաց Բաշմարտի բառը որ Լատինացիք արտաստարտութիւնով թարգմանած են , իրեն հասարակ նշանակութեանը մէջ , Գին Իբրէլ , յարգել , զարմանալ կը նշանակէ . ու այս իմաստով Պլուտարքոսի օրինակը չափէ դուրս կ'երեւի : Շատ բաներ մեր զարմացմանը արժանի են , ու տօսիկա անիրաւութիւն մը պիտի ըլլար թէ որ զլանայինք անանցմէ ինչ բանի որ արժանի են : Սակայն այս բառը երբեմն ուրիշ նշանակութիւն մը կ'ընդունի . այսինքն՝ արշիլ , սքանչանալ , զմայելի , ու այս միտքով Պլուտարքոսի մտածմունքը շատ ի-

բաւացի է : Այն ախշութիւնք ու այն զմայ-
լումք՝ որ հարստութիւնք , իշխանութիւնք
ու մեծատուն մարդոց շաղկութիւնք տկար
միտքերուն առիթ կուտան , խանդարեալ դա-
տողութեան մը արդիւնքն են , ու մարդը
կը ձգեն հաղարաւոր անհանդարտ ցանկու-
թիւններու մէջ , ու ասոնք ալ զինքը թշուառ
կ'ընեն :

(5) Հին ժամանակի մէջ երաժշտութիւ-
նք շատ եղանակներու բաժնուած էր որոնք
իրենց անունք կ'առնէին այն ժողովուրդնե-
րէն որոնց մէջն որ սովորութիւնն եղած էին .
նախ և առաջ միայն երեք եղանակ կար ու
րոնք էին մէկ մէկէ տարբեր ձայնի եղանա-
կի վրայ : Ամենէն հասարկըրու էր Գորացի ,
պինդ սուրն ալ Ախագացին էր , Փախագացին
ալ միջակը , անանկ որ Գորացին ու Ախագա-
ցին իրենց մէջ տեղը երկու եղանակի միջոց
(թիէր մաժէօր) կը բովանդակէին : Այս ե-
ղանակին միջոցը կէս եղանակի բաժնելով
ուրիշ երկու եղանակ ալ , շինեցին , Յանիա-
կանն ու Եւողականը , որոնց առաջինը մը-
տաւ Գորացիին ու Փախագացիին մէջտեղը ,
և երկրորդը Փախագացիին ու Ախագացիին
մէջտեղը : Կորէն՝ նոր եղանակներ ալ եւեւ
ցուցին որոնք իրենց անունները առջի հինգ
եղանակէն առին , անոնց փակցրնելով ԻԲԵԸ
(վրայ) նախադրութիւնք , բարձր եղանակ-
ներուն համար , և ԻԲՅ (տակը) նախադրու-
թիւնք ցած եղանակներու համար , ու ըսին

ԻԲԵՐՄՈՐԻԷՆ՝ ('ի վեր քան զԳորացին) , ԻԲԵՐ-
 ՅՈՒԻԷՆ՝ ('ի վեր քան զՅոնացին) , և այլն .
 ԻԲՕՄՈՐԻԷՆ՝ (ստոր քան զԳորացին) , ԻԲՕՅԻՆ-
 ՆԻԷՆ՝ (ստոր քան զՅոնացին) , և այլն : Այս
 նոր եղանակներ մտցնելը , կ'ըսուի թէ առա-
 ւել խանգարման պէս եղաւ քան թէ կատա-
 րելագործութիւն երաժշտութեան , որ թուէ-
 ցաւ և ուժէ ինկաւ առջի պարզութեանէն
 'կեռանալով : (Ռօլէն Հիմնօսութիւն .)

(6) Տեղեփոն՝ Հէրքիւլէսի տղան ու Մի-
 կենաց թագաւորը , Տրոլայի վրայ դացող
 Յունաց իր երկրէն անցնելու թող շտալով ,
 Աքիլլէսի ձեռքով վիրաւորուեցաւ . բոլոր
 գործածուած դեղերը անօգուտ եղան : Ան-
 առնն պատգամին խորհուրդ հարցուցին , որ
 պատասխան տուաւ թէ՛ Ո՛ր երկաթն որ զին-
 քը խոցեց , նոյնը պիտի բժշկէ : Հաշտուե-
 ցաւ Յունաց հեռ , և մասնաւորապէս Աքի-
 լէսին հեռ , որն որ թող տուաւ իրեն տէ-
 դին երկաթը խարտոցելու : Պողոտոսին
 ժանգն ու մասերը որ խարտոցը նիզակին վը-
 րայէն զատեց , դրսուանց գործածելու դեղ
 մը շինեց , վէրքին վրայ դրաւ ու խկոյն բը-
 ժրշկուեցաւ :

Պարսից եւ ուրիշ օտար ազգաց թագաւոր-
ներուն իմաստաշից խօսքերք :

ԿԻՒՐՈՍ

Պարսիկները կը սիրէին այն մարդիկը որոնք
որ արծառնդն էին , եւ անանկ մարդիկը ամե-
նէն աղէկ մարդ կը համարէին , վասն զի Աիւրոս
իրենց թագաւորը՝ որ շատ կը սիրէին , այս
ձեւով քիթ ունէր :

Աիւրոս կ'ըսէր թէ « Ան մարդիկը որ իրենց
առանձին բարեացը համար շէն ուղեր ամենե-
ւին աշխատիլ , կը ստիպուին ուրիշներուն բա-
րութեանը համար դործելու , եւ թէ այն
մարդը արժանի չէ ուրիշի հրամայելու , թէ
որ իր ստորիններէն աւելի աղէկ չէ : »

Պարսիկները ուղեցին թողուլ իրենց եր-
կիրը որուն հողը պինտ ու լեռնատ էր , որ ա-
ւելի քաղցր ու աւելի հարթ երկիր մը երթան
ու բնակին : Աիւրոս անոնք արդիւնց ու ըսաւ
թէ « Մարդոց բնաւորութիւնը , նմանապէս եւ
տունիկերը կ'ըլլան նման այն հողին ուր որ իրենք
կը բնակին : »

ԴԱՐԵՆ

Դարեհ՝ Քսերքսէսին հայրը , ինք իրեն հա-
մար այս վկայութիւնը կու տար թէ վասնզի
մէջ ստիպականէն աւելի զինքը խոհեմ կ'երեւ-
ցընէր : Արովհետեւ այս իշխանը կ'ուզէր իր
ժողովուրդին վրայ հարկ մը ձգել , կանչէց իր

առջին ամեն մէկ նահանգին տինտ երևելի
մարդիկը, ու անոնց հարցուց թէ Հարկը շատ
ծանր չէ՞ր մի: Անոնք իրեն տատասխան տուին
թէ Չէ: Ան ատենը ամեն մէկ հարկատուին
քաժինը կէսի իջեցուց:

Օր մը երբ Գարեհի իր պալատականներուն
առջին մէկ մեծ նաւը մը կտրեր էր, անոնցմէ
մէկը իրեն հարցուց թէ Աւագէր այնչափ շատ
որքանու թիւն կենաց իրեն, որչափ հատ որ ու-
նէր նաւը: Գարեհ պատասխան տուաւ.
Չովպիւրոսներ —: Այս Չովպիւրոսը քաջ
պատերազմող մէկ մարդ մ'էր, և բոլորովին
Գարեհին անձնանուէր: Երբոր այս թագա-
ւորը Բաբելոն քաղաքը տաշարեր էր, Չով-
պիւրոս իր ունչը ու ականջները կտրեց, ու
ասանկ ծայրատեալ գնաց Բաբելոնացիներուն,
և անոնց հաւատացուց թէ Գարեհ զինքը այն
ժիւճակին հասուցեր էր: Բաբելոնացիք անոր
խօսքին այն աստիճան խաբուեցան որ իրենց
ղօրաց հրամանատարութիւնը իրեն յանձնե-
ցին, և այս ճամբով քաղաքը Գարեհին մատ-
նեց: Անոր համար Գարեհ շատ անգամ կ'ըսէր
թէ « Դատ կը ցանկայի Չովպիւրոսը իր ան-
գամներովը ամբողջ ունենալ, քան թէ Բաբել-
ոնին տէ՞ս հարկը քաղաք: »

ԷՆՄ ԻՐԵՄ

Շամիրամ դերեզմանը իր կենդանու թեա-
նը շինել տուաւ այս տաաղանագրովը. « Թէ որ

մէկ իշխան մը ստակի կարօտութիւն ունենայ •
 Թող այս գերեզմանը բանայ և ասկէց անկէ
 որչափ որ կ'ուզէ • Գարեհ' գերեզմանը
 բանալ տուաւ և ստակի տեղ այս ուրիշ խօս-
 քը գտաւ • « Թէ որ դուն մէկ գէշ և անյար-
 ազահ մարդ մը շքլայիր, շէիր դար մեռելոց
 մոխիրները տակնու վրայ ընել : »

ՔՍԵՐՔՍԷՍ

Արիմենէս՝ որ իր եղբօրը Գարեհեան
 Քսերքսէսին հետ թագաւորութեան վրայ
 վէճ կ'ընէր, իր պահանջմունքը բանի բերե-
 լաւ համար Բաղարիայէն եկաւ : Քսերքսէս
 անոր ընծաներ խրկեց ու ընծան տանողին
 բերանը սա խօսքը դրաւ որ ըսէ Քսերքսէսին
 թէ « Ահա այն ընծաները որ եղբայրդ քեզի
 կու տայ հիմակու հիմա : Թէ որ ինքը թա-
 գաւոր հրատարակուի, դուն անոր քովը բո-
 լոր տէրութեան առաջին անձը պիտի ըլլաս » :
 Իրաւցրնէ Քսերքսէս թագաւոր հրատարա-
 կուեցաւ, Արիմենէս ալ առաջին մարդը ե-
 ղաւ որ իր եղբօրը առջին ծունկ շոքեց ու անոր
 գլուխը թագով պսակեց : Քսերքսէս ալ Արի-
 մենէսին տուաւ իրմէ ետեւ Պարսից մէջ առա-
 ջին կարգի պատիւը :

Քսերքսէս շատ բարկացեր էր Բաբելոնցւոց
 գէմ որոնք իրեն հպատակելու լուծը մէկդի
 ձգած էին : Ասոնք հնազանդեցրնելէն ետեւ
 սաստիկ արգիլեց որ զէնք շկրեն, ու պարտա-

ւորեց որ երաժշտական նուագարաններ դար-
նեն , ուտեն , խմեն , զբօսուեն և երկան հան-
դերձներ հագնին :

Վաճառական մը եկաւ Քսերքսէսին Առ-
տիկէի շոր թուղ ծախելու : Քսերքսէս անոր
խնայուց թէ Չպիտի ուտէ ան սրաւղը մինչև
որ չտիրապետէ այն երկրին ուսկից որ անխի-
կ'ելէ :

Անգամ մը Քսերքսէս խնայաւ որ Յունաց
լրտեաներ կան իր զօրաց մէջը , անանք բոլոր
բանակին մէջը ստրայքնել տուաւ և տեղեր-
նին խրկեց ամենեւին միաս մը շտաբով :

ԱՐՏԱՀԵՍ

Քսերքսէսին որդին՝ Արտաշէս երկայնա-
ձեռն մականուանեալ էր . վասն զի մէկ ձեռ-
քը միւսէն երկայն էր , կ'ըսէր ամեն ատեն
թէ “ Իշխանի մը աւելի արժանաւոր բան է
տալ , քան թէ առնել : ”

Պարսից թագաւորներուն մէջ Արտաշէս
եղաւ առաջին որ որսի ատեն իրեն հետ եղող
սալատականներուն իրմէն առաջ կենդանին
զարնելու թոյլտուութիւն ըրաւ : Նմանապէս
ինքն եղաւ առաջին որ հրաման հանեց թէ
երբոր մեծամեծներէն մէկը յանցանք մը գոր-
ծէ , անխիայ ձողկելու և մողերը փետտելու
տեղը , անոր լաթերը ձեծեն ու գլխէն թաղը
հանեն : Քսենափոն՝ Խրատ Աիւրոսի առաջին
գրքին մէջ կ'ըսէ թէ Աիւրոս որսի ելած ըլ-

լալով աղաչեց իր մեծ հօրը՝ Աժդահակին, որ իրեն ընկերները առաջ նեւ նեւեւը բողբովին աղատ թողու :

Սատխարղան իր սենեկապետը անիրաւ բան մը կը խնդրէր իրմէն : Արտաշէս՝ որ գէտէր թէ երսուն հազար Գարեհեան ըստած ոսկի խոստացեր էին իրեն սենեկապետին, թէ որ գործերնին լըմընցընէ, կանչեց իր գանձապետը ու յիշեալ ստակը ամբողջ բերել տալով : Սատխարղանին տուաւ, ըսելով անոր թէ. « Ա՛ռ այս ստակը, թէ որ ես ստիկա քեզի տամ, աղքատ չեմ ըլլար, բայց թէ որ քու խնդրածդ կատարեմ, անիրաւ կ'ըլլամ : »

ԿԻՒՐՈՍ ՓՈՔԸ

Կիւրոս Փոքրը Լակեդեմոնացիները իրեն հետ բարեկամ ընելու համար, կ'ըսէր անոնց թէ իր եղբօրմէն աւելի սրտոտ է, թէ շատ կը խմէ և գինիի աղէկ կը դխանայ. երբ Արտաշէս որսի ոտակն հազիւ ձիուն վրայ կը կենար, կամ վտանգի մէջ իր աթուին վրայ նստած : Իրեն զօրք խրկելու վճիռ տալու համար իրենց կը խոստանար սոսկական զինուոր ներուն՝ ձի սպարաստել, ձիաւորներուն կառք տալ, գեղեր անոնց՝ որ գետին ունէին, քաղաքներ անոնց՝ որ գեղերու տէր էին, խեղ ոսկին ու արծաթը կը ցրուէր անանկ շռայլու թեամբ որ սէտք կ'ըլլար կշառել վախանակ համբուլու :

ԱՐՏԱՇԷՍ ՄԵՄՆՈՆ

Արտաշէս մահանաւ անեալն Մեմնան, Կիւ-
րաօ Փոքրին և դքայրը, միայն ամեն մարդու
դիւրու թեամբ ուղած ատեննին իր քովը մըա-
նալու հրաման տալուն գոհ չըլլալով, կ'ուզէր
ալ որ իր թագուհին՝ Երբոր ճամբայ կ'եր-
թար, իր կառքին վարագոյրը բանար, որպէս
զի անոր հետ ով որ ուզէր, ազատօրէն կարող
ըլլար խօսելու :

Ազքատ մարդ մը Արտաշէսին շախաղանց
մեծութեամբ խնձոր մը ընծայ ըրած ըլլա-
լով՝ շնորհակալութեամբ ընդունեց ու ըսաւ .
« Կենդանի է արեգակը . ես կը հաւատամ որ
այս մարդը պզտիկ քաղաք մ'ալ մեծցընե-
լու կարող է թէ որ իրեն տրուի անոր կա-
ռաւարութիւնը : »

Պատերազմի մը մէջ ամեն զօրքերուն փա-
խած ատենը, Արտաշէս իր բոլոր կահ կարա-
սիքը կորսընցուց, և հարկադրեցաւ չոր թուղ
և դարիէ հաց ուտելու . « Ո՛հ, ըսաւ, ի՞նչ
հաճոյական բաներէ զրկուերեմ մինչև հիմա : »

ՊԱՐԻՍԱՏԻՍ

Պարխատիա՝ Կիւրասին ու Արտաշէսին
մայրը, կ'ըսէր թէ « Իշխանի մը յանդիմանու-
թիւն ընելու ատեն, պէտք է գործածել մե-
տաքսէ խօսքեր, » այսինքն բարակ ու կակուղ :

Որոնտէս՝ Արտաշէս թագաւորին փեսայն , այս իշխանին ցասմանը հանդիպելով և իր վեճակը կորսընցընելով , կ'ըսէր թէ « Ինչպէս որ թուարկութեանց մէջ համբանք համբողին մասները կ'արժեն երբեմն տասը հազար և երբեմն մէկ միութիւն , ասանկ ալ թագաւորներուն սիրելիները այս ինչ ասեն ամեն բանի կարող կ'ըլլան , և այն ինչ վայրկեան և ոչ բանի մը : »

ՄԵՄՆՈՆ

Մեմնան Գարեհին կողմէն Աղէքսանդրի դէմ պատերազմելու ատենը , լսեց որ իր վարձքով բռնած ղնաւորներէն մէկը Աղէքսանդրի վրայ դէշ կը խօսէր : Անիկայ իր նիշակովը ձեծեց ու ըսաւ . « Ես քեզի վարձք կու տամ Աղէքսանդրի դէմ ձեծկուելու համար , չէ թէ անոր դէշ զուրցելու : »

Եգիպտոսի թագաւորաց սոցորու թիւնները :

Եգիպտոսի թագաւորները երկրին մէկ օրինացը համաձայն դատաւորնե թուն առաջուց երդում ընել կու տային , որ եթէ թագաւորնէրը կամ իշխանները իրենց անիրաւ բան մը ընելու հրաման ընեն , ամենևն ինչ հնազանդին :

ՊՈՂՏԻԱՍ

Պողոտիսա՛ որ Տրովադայի պատերազմին
 ատենները Թրակիայի մէջ կը թագաւորէր .
 միւնայն ժամանակ Յունաց և Տրովացւոց
 դեասպանները մէկ տեղ առջւեր հանեց , սրնոց
 երկուքն ալ իրեն սգնութիւնը խնդրելու
 եկած էին : Անոց ըստ . Պարսիսն խրատ
 կու տամ , թող շեղինէն ձգէ , ևս իրեն ան
 պատերազմին պատճառ եղող կնկանը տեղը
 երկու գեղեցիկ կին կու տամ :

ՏԵՒԵՍ

Տերէս՝ Սիտակէսին հայրը կ'ըսէր թէ Երբ
 որ խաղաղ կը կենամ անգործ և կամ պատե-
 րազմ չեմ ընէր , ամենեին տարբերու թիւն
 չեմ գտներ իմ ու ձիադարմանիս մէջ տեղը :

ՎՈՏԻՍ

Վասիս ընդունելով վազը մը ընծայ , վա-
 խարէն առիւծ մը խրկեց :

Վասիս բնութեամբ բարկացող մարդ էր
 և խստութեամբ կը պատժէր իր սպասաւոր-
 ները , երբոր իրենց գործոյն մէջ պակասու-
 թիւն մը գործէին : Իւր բարեկամներէն մէկը
 չքնադադիւտ յախճատակի անօթներ ընծայ
 ըրաւ իրեն որ շատ դիւրաբեկ էին , բարեկա-
 մին մեծ հատուցումներ ըրաւ , բայց խնայե

բողոք անօթները կտարեց, վախճալով որ չըլլայ թէ մէկէն 'ի մէկ բարկութիւնը շարժած առտէնը՝ շարաշար պատժէ այն սպասաւորները որ դիպուածով մը անօթներէն մէկը կտարելու ըլլան:

Ի Դ Ա Ն Թ Ի Ի Մ

Իդանթիւքս Սկիւթացւոց թագաւորը, ի մանալով որ Դարեհ իր դէմը կու գար պատերազմելու համար, Յնիացւոց բռնաւորներուն ըսել տուաւ որ Դանուբի վրայ եզած կամուրջը աւրեն, ու ասով ինքըզինքնին ծառայութենէն ազատեն: Արտիկեակ առնելը այս խնդիրը մերժեցին Դարեհին ըրած երդումնին պահելու համար, ըսաւ թէ Ընչից գերիները ամենեւին ձգել փախչելու յօժարութիւն չեն ունենար:

Ա Տ Ե Ա Ս

Ատէաս դրեց Փիլիպպոս թագաւորին այսպէս. « Դուն կը հրամայեա Մակեդոնացւոց որ սորված են մարդոց դէմ պատերազմելու. իսկ ես կը հրամայեմ Սկիւթացւոց որ գիտեն կռուիլ անօթութեան և ծարաւոց հետ: » Եւ արտիկեակ ինքն անձամբ իւր ձին կը դարմանէր. Փիլիպպոսի գեապաններուն հարցուց թէ էրեկոց թագաւորն ալ անանկ կ'ընէ՞ արդեօք: Ասիկայ պատերազմի մէջ գերի բռնելը էր մէկ երեւելի սրնգահար մը թովենիստ անուամբ,

որուն հրամայեց՝ որ սրինգը հնչեցընէ իր առ-
ջիւր, և երբ տեսաւ որ բոլոր նստողները զար-
մացմամբ սրաշարուած էին, ամենուն առջին
խոստովանեցաւ իր անձին համար թէ՛ Ա՛լ շատ
բերկրու թիւն կը դգայ ձիու մը խինջէն ըսե-
լու ատենը :

ՍԿԻԼՈՌՈՍ

Սկիզբաւ մեռնելու մօտ բլլալով՝ իրեն
ու թսուէն արու աղաքը կանչել տուաւ և ա-
նոնց ամեն մէկուն կարգաւ իրարու կապած
դաւաղաններու արցակ մը տուաւ որ կատրեն :
Երբ որ ամենն ալ կարգաւ փորձեցին ու շի-
կրցան կատրել, կապը քակեց և մէկիկ մէկիկ
դիւրու թեամբ կատրեց իրարու ետեւ : Ասով
անոնց ուղեց խնայընել թէ՛ Արշաթի որ միաբան
մնան, անյաղթելի պիտի ըլլան, բայց թէ որ
մէջի բնին տարածայնու թիւն մտնելով իրարմէ
բաժնաւին, պիտի տկարանան ու իրենց անձին
կարատեանը պատճառ պիտի ըլլան :



Սկիզիոյ բռնաւորներուն խնայաւորից
իօսքերը :

ԱԳԱԹՈԿՂԵՍ

Ի թակէ կղզիին բնակիչները Սիրակուսացի
ծովային զօրաց համար Ագաթսկղէսին ամբար-
տանու թիւն ըսին թէ կղզիին մօտե՛նալով քանի

մը ոչխարի հօտ յափշտակեր են : “ Չեր թա-
 գաւարք , պատասխան տուաւ Ագաթանգէս ,
 երբոր Աիկիլիա եկաւ , մեր ոչխարները յա-
 փրշտակելով միայն գոհ չըլլալուն , հովիւնե-
 շուն աչքն ալ չփորեց (1) : ”

ԳԻՈՒՆ

Գիան՝ Գիանէսիտ փոքրը Սիրահուսայէն
 վանանքէն ետե ըսեց որ Կալիպոսոս անուն իր
 բարեկամներէն մէկը՝ որուն վրայ շատ վատա-
 հաւթիւն ունէր , զինքը մեռցընելու ետե.է է :
 Անոր անհաւատարմութիւնը փորձել չուզեց
 բնաւ , և ըսաւ . “ Աւելի կ'ուզեմ մեռնիլ քան
 թէ ինքրոյնքս պաշտպանել , չէ թէ միայն
 իմ թշնամիներէս , հասցա իմ բարեկամներէս
 ալ : ”

(1) Այսինքն Ռդիսեւս Գողթիեման Աիկղօսային
 աչքը :

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի 4 ՅՈՒՆԻՍԵՐ 1859

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս



Այս Ընկերութեան նշատակն է, ազգային շեշուած գրքեր տպել տալ, եւ ջանոնք առանց շահու բուն իրենց եղած գիներովը ծախել :

Այս Ընկերութեան կանոններն են .

Ա. Ընկերութեան խորհրդական անգամները 10 հոգի են՝ եւ այս գործիս ձեռք ջարկած են, Ընկերութեան ամեն հոգերը իրենց ջրայ, եւ ամեն կերպով իրենք դատաստանառու ըլլաչու դայմանու :

Բ. Այս Ընկերութեան հաջորդ ըլլաչ ու ջոցը՝ կանխիկ դիտի վճարէ տարին 20 ջուրուչ, մէկ տարեկան տոմսակագին :

Գ. Այս 20 ջուրուչնոց տոմսակներէն ՚ի շատ, ո՛վ որ 200 ջուրուչ վճարէ, ու 200 ջուրուչնոց տոմսակ մ՛տռնէ մէկ անգամ, այն անձը մշտնջենաւոր ընկեր կը համարուի, եւ անոր անունը կ՛արձանագրուի Ընկերութեան գիւտնին մէջ :


Դ. Այս 200 ջուրուչնոց տոմսակներէն հաւարուած տակոյն աչ գրքեր դիտի տպլին, բայց անանկ որ ամեն մէկ մշտնջենաւոր տոմսակ, տարին 20 ջուրուչ տարեկան տոմսակներու շահ տայ, եւ այս շահը՝ 20 ջուրուչնոց

ԱՆՈՒԱՆՔ

ՄՇՏՆԶԵՆԱՒՈՐ ԲԱԺԵՈՐԴԱՑ .



- Անուխեան Մ . Եսայի Աղա .
Գաբամաճեան Մ . Լէօն Աղա .
Գաբամաճեան Յովսէփ Աղա .
Գաբամաճեան Մ . Սարգիս Աղա .
Գաբամաճեան Մ . Տիգրան Աղա :
Կրճիկեան Անդրանիկ Աղա .
Հարկեց Նշան Աղա .
Մարգարեան Յարութիւն Աղա .
Մարկոսով Դանիէլ Աղա .
Մէրասեփեան Պօղոս Աղա .
Յակօբեան Յովհաննէս Աղա .
Սախաեան Կարապետ Աղա .
Սպարթաղեան Յովհաննէս Աղա .
Ղարապետեան Ահարօն Աղա .



U. 2.

No. 4579